ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

# Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է Ազգային ժողովի կողմից
27 դեկտեմբերի 1997 թ.

## ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ

## Գ Լ ՈՒ Խ I

## *ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ*

### Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան

Սույն օրենքը սահմանում է՝

- Հայաստանի Հանրապետությունում պետական տուրքի հասկացությունը,
- տուրքերի տեսակները և դրույքաչափերը,
- տուրք վճարողներին,
- տուրքը գանձելու, վերադարձնելու, արտոնություններ տրամադրելու կարգն ու պայմանները և կարգավորում է պետական տուրքի հետ կապված մյուս հարաբերությունները:

### Հոդված 2. Պետական տուրքի հասկացությունը

Հայաստանի Հանրապետությունում պետական տուրքը պետական մարմինների լիազորությունների իրականացմամբ պայմանավորված՝ սույն օրենքով սահմանված ծառայությունների կամ գործողությունների համար ֆիզիկական և իրավաբանական անձանցից Հայաստանի Հանրապետության պետական և (կամ) համայնքների բյուջեներ մուծվող օրենքով սահմանված պարտադիր վճար է:

***(2-րդ հոդվածը փոփ. 13.12.00 ՀՕ-123)***

## Գ Լ ՈՒ Խ II

## *ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔ ՎՃԱՐՈՂՆԵՐԸ, ՆՐԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ*

### Հոդված 3. Պետական տուրք վճարողները

Հայաստանի Հանրապետությունում պետական տուրք վճարողներ են համարվում սույն օրենքի 7 հոդվածով նախատեսված ծառայություններից կամ գործողություններից օգտվող ֆիզիկական և իրավաբանական անձինք (այսուհետ` պետական տուրք վճարողներ):

*(3-րդ հոդվածը փոփ. 13.12.00 ՀՕ-123)*

**Հոդված 4. Պետական տուրք վճարողների իրավունքները**

Պետական տուրք վճարողներն իրավունք ունեն`

- պահանջել պետական տուրք գանձող մարմնից` կատարելու տուրքի հաշվարկ, իսկ անհրաժեշտության դեպքում` նաև վերահաշվարկ.

- վերադասության, ինչպես նաև դատական կարգով գանգատարկել պետական տուրք գանձող մարմնի կամ պաշտոնատար անձանց գործողությունները.

- դիմել համապատասխան պետական մարմիններ` պետական տուրքի վճարման արտոնություններ ստանալու համար.

- ստանալ պետական տուրքի վճարման մասին տեղեկանք.

- սույն օրենքով սահմանված դեպքերում պահանջել և ստանալ վերադարձման ենթակա պետական տուրքի գումարը:

**Հոդված 5. Պետական տուրք վճարողների պարտականությունները**

Պետական տուրք վճարողները պարտավոր են`

- ժամանակին և լրիվ վճարել սույն օրենքով սահմանված պետական տուրքերը.

- պետական տուրքի վճարումով ծառայություններ կամ գործողություններ իրականացնող մարմիններ կամ պաշտոնատար անձանց ներկայացնել պետական տուրքի վճարումը հիմնավորող փաստաթղթերը.

- ներկայացնել պետական տուրքի վճարման գծով իրեն վերապահված արտոնությունները հաստատող փաստաթղթերը.

- սույն օրենքով սահմանված դեպքերում պետական բյուջե վճարել պետական տուրքը ժամանակին չվճարելու համար հաշվարկված տույժի գումարները:

*(5-րդ հոդվածը փոփ. 13.12.00 ՀՕ-123)*

**Հոդված 6. Պետական տուրքի գծով պարտավորության դադարումը**

Պետական տուրքի վճարման` իրավաբանական անձանց պարտավորությունը դադարում է այդ պարտականության կատարումով, պետական տուրքի վճարումից ազատումով, պետական տուրքի վերացումով կամ օրենքով սահմանված այլ հիմքերով, իսկ ֆիզիկական անձանց համար`

պարտավորության կատարումով, պետական տուրքի վճարումից ազատումով, պետական տուրքի վերացումով կամ պետական տուրք վճարողի մահվան դեպքում: ***(2-րդ նախադասությունը հանվել է 15.12.05 ՀՕ-11-Ն)***

***(6-րդ հոդվածը փոփ. 13.12.00 ՀՕ-123, լրաց. 14.12.01 ՀՕ-283, փոփ. 15.12.05 ՀՕ-11-Ն)***

**Հոդված 6[1]. Տարեկան պետական տուրքի վճարման պարտավորության դադարումը**

1. Անկախ սույն օրենքի 6 հոդվածում նշված դրույթներից՝ ֆիզիկական անձանց և կազմակերպությունների հերթական տարեկան պետական տուրքի վճարման պարտավորությունը դադարում է՝

1) այդ պարտավորության կատարմամբ՝ սույն օրենքով սահմանված դրույքաչափերով ու ժամկետներում հերթական տարեկան պետական տուրքի գումարների (պետական տուրքի գումարը համարվում է վճարված Հայաստանի Հանրապետության բյուջեի համապատասխան հաշվին հաշվեգրվելու օրվանից), ինչպես նաև դրանց վճարումն ուշացնելու համար սույն օրենքով սահմանված տույժերի գումարների վճարմամբ, տարեկան պետական տուրքի վճարումից ազատումով, օրենքով տարեկան պետական տուրքի վերացմամբ, ինչպես նաև ֆիզիկական անձի մահվան դեպքում.

2) մինչև հերթական տարեկան պետական տուրքի վճարման համար սույն օրենքով սահմանված ժամկետի վերջին օրը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով լիազոր մարմնի կողմից տարեկան պետական

տուրքի գանձման օբյեկտ հանդիսացող ծառայությունների մատուցման կամ գործողությունների կատարման արդյունքում տրված փաստաթղթերի (իրավունքների, թույլտվությունների, արտոնագրերի, լիցենզիաների) գործողության դադարեցման (ուժը կորցրած ճանաչվելու) դեպքում.

3) եթե տարեկան պետական տուրք վճարողը մինչև հերթական տարեկան պետական տուրքի վճարման համար սույն օրենքով սահմանված ժամկետի վերջին օրը լիազոր մարմին դիմում է ներկայացնում լիազոր մարմնի կողմից տարեկան պետական տուրքի գանձման օբյեկտ հանդիսացող ծառայությունների մատուցման կամ գործողությունների կատարման արդյունքում տրված փաստաթղթերի (իրավունքների, թույլտվությունների, արտոնագրերի, լիցենզիաների) գործողության դադարեցման (ուժը կորցրած ճանաչվելու) համար և այդ դիմումի հետագա բավարարման դեպքում:

Եթե տարեկան պետական տուրք վճարողն իրավունքի, թույլտվության, արտոնագրի կամ լիցենզիայի գործողության դադարեցման (ուժը կորցրած ճանաչվելու) համար դիմումը լիազոր մարմին ներկայացնում է հերթական տարեկան պետական տուրքի վճարման համար սույն օրենքով սահմանված ժամկետի վերջին օրվանից հետո, ապա դրա բավարարման դեպքում

հերթական տարեկան պետական տուրքի վճարման համար սույն օրենքով սահմանված ժամկետի վերջին օրվանից (դիմումում դադարեցման ավելի ուշ ժամկետ նշված լինելու դեպքում` այդ օրվանից) սկսած հաշվարկվում է միայն տույժ` մինչև գործողության դադարեցման (ուժը կորցրած ճանաչվելու) համար դիմումի ներկայացման օրը: Եթե դիմումում նշված է ավելի վաղ ժամկետ, քան դիմումի ներկայացման օրը, ապա տույժը հաշվարկվում է մինչև իրավունքի, թույլտվության, արտոնագրի կամ լիցենզիայի գործողության դադարեցման (ուժը կորցրած ճանաչվելու) համար դիմումի ներկայացման օրը.

4) արտոնագրման, թույլտվության կամ լիցենզավորման ենթակա գործունեության տեսակն օրենքով արտոնագրման, թույլտվության կամ լիցենզավորման ենթակա չհամարվելու դեպքում` համապատասխան օրենքն ուժի մեջ մտնելու օրվանից` հերթական տարեկան պետական տուրքի մասով:

2. Արտոնագրի, թույլտվության կամ լիցենզիայի գործողությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կասեցվելու դեպքում (բացառությամբ կասեցված լինելու ժամանակահատվածում դիմումի համաձայն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ արտոնագրի, թույլտվության կամ լիցենզիայի գործողության ուժը կորցրած ճանաչման դեպքերի) հերթական տարեկան պետական տուրքերի գումարները ենթակա են վճարման անկախ արտոնագրի, թույլտվության կամ լիցենզիայի գործողության կասեցման հիմքերից ու ժամկետներից:

***(6[1] հոդվածը լրաց. 15.12.05 ՀՕ-11-Ն)***

**Գ Լ ՈՒ Խ III**

*ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ԳԱՆՁՄԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԸ*

**Հոդված 7. Պետական տուրքի գանձման օբյեկտները**

Հայաստանի Հանրապետությունում պետական տուրքը գանձվում է`

ա) դատարան տրվող հայցադիմումների, դիմումների ու գանգատների, դատարանի դատական ակտերի դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար, ինչպես նաև դատարանի կողմից տրվող փաստաթղթերի պատճեններ (կրկնօրինակներ) տալու համար.

բ) ***(«բ» կետը հանվել է 28.12.98 ՀՕ-277)***

գ) նոտարի կողմից նոտարական գործողություններ կատարելու համար.

դ) քաղաքացիական կացության ակտեր գրանցելու, դրանց մասին քաղաքացիներին կրկնակի վկայականներ, քաղաքացիական կացության ակտերում կատարված գրառումների փոփոխությունների, լրացումների, ուղղումների և վերականգնման վկայականներ տալու համար.

ե) Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու և Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը փոխելու համար.

զ) հյուպատոսական ծառայություններ կամ գործողություններ իրականացնելու համար.

է) պետական գրանցման համար.

ը) մշակութային արժեքները արտահանելու կամ ժամանակավոր արտահանելու իրավունքի վկայագիր տալու համար.

թ) գյուտերի, օգտակար մոդելների, արդյունաբերական նմուշների, ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների, ֆիրմային անվանումների (արդյունաբերական սեփականության օբյեկտների), ինտեգրալ միկրոսխեմաների տոպոլոգիաների իրավական պահպանության հետ կապված իրավաբանական նշանակություն ունեցող գործողությունների համար.

ժ) ֆիզիկական անձանց տրվող իրավաբանական նշանակություն ունեցող փաստաթղթերի, որոշակի ծառայությունների կամ գործողությունների համար.

ժա) լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելու նպատակով լիցենզիաներ տալու համար.

ժբ) սույն օրենքի 19[1], 19[2] և 20 հոդվածներով սահմանված ծառայությունների կամ գործողությունների համար:

***(7-րդ հոդվածը խմբ., փոփ. 28.12.98 ՀՕ-277, փոփ. 13.12.00 ՀՕ-123, խմբ. 02.05.01 ՀՕ-181, 12.06.02 ՀՕ-375-Ն, 28.11.07 ՀՕ-282-Ն, լրաց. 28.04.09 ՀՕ-108-Ն)***

**Գ Լ ՈՒ Խ IV**

***ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ***

**Հոդված 8. Պետական տուրքի դրույքաչափերը**

Պետական տուրքի դրույքաչափերը սահմանվում են գնահատման ենթակա գույքի արժեքի կամ սույն օրենքով սահմանված բազային տուրքի նկատմամբ:

Բազային տուրքի չափ է սահմանվում 1000 դրամը:

***(Մասն ուժը կորցրել է 13.12.00 ՀՕ-123)***

***(6-րդ հոդվածը փոփ. 13.12.00 ՀՕ-123)***

**Հոդված 9. Դատարան տրվող հայցադիմումների, դիմումների ու գանգատների, դատարանի դատական ակտերի դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար, ինչպես նաև դատարանի կողմից տրվող փաստաթղթերի պատճեններ (կրկնօրինակներ) տալու համար պետական տուրքի դրույքաչափերը.**

***(Վերնագիրը փոփ. 28.11.07 ՀՕ-282-Ն)***

Առաջին ատյանի դատարաններ տրվող հայցադիմումների, դիմումների ու գանգատների, դատարանի դատական ակտերի դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար, ինչպես նաև դատարանի կողմից տրվող փաստաթղթերի պատճեններ (կրկնօրինակներ) տալու համար պետական տուրքը գանձվում է հետևյալ դրույքաչափերով.

| | |
|---|---|
| 1. հայցադիմումների և որպես վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ ներկայացնող երրորդ անձ գործին մասնակցելու մասին դիմումների համար՝ | |
| ա) գույքային պահանջով | հայցագնի երկու տոկոսի չափով, բայց ոչ պակաս բազային տուրքի 150 տոկոսից |
| բ) ոչ գույքային պահանջով | բազային տուրքի քառապատիկի չափով |
| 2. իրավաբանական անձանց սնանկ ճանաչելու դիմումների համար | բազային տուրքի 500-պատիկի չափով |
| 3. քաղաքացիներին սնանկ ճանաչելու դիմումների համար | բազային տուրքի 100-պատիկի չափով |
| 4. հատուկ վարույթի գործերի վերաբերյալ դիմումների՝ | |
| ա) անչափահասին լրիվ գործունակ ճանաչելու համար | բազային տուրքի չափով |
| բ) ***(«բ» ենթակետն ուժը կորցրել է 13.12.00 ՀՕ-123)*** | |
| գ) ***(«գ» ենթակետն ուժը կորցրել է 13.12.00 ՀՕ-123)*** | |
| դ) ***(«դ» ենթակետն ուժը կորցրել է 13.12.00 ՀՕ-123)*** | |
| ե) այլ դիմումների համար | բազային տուրքի եռապատիկի չափով |
| 5. իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի հաստատման մասին դիմումների համար | բազային տուրքի կրկնապատիկի չափով |
| 6. ըստ ներկայացնողի և օրդերային կորցրած արժեթղթով հավաստված իրավունքները վերականգնելու մասին դիմումների համար | բազային տուրքի չափով |
| 7. արբիտրաժային տրիբունալների վճիռների հարկադիր կատարման կատարողական թերթ տալու մասին դիմումների համար՝ | բազային տուրքի քառապատիկի չափով |
| 8. դատարանի դատական ակտերի դեմ վերաքննիչ բողոքների համար՝ | |

| | |
|---|---|
| ա) գույքային պահանջի գործերով | վերաքննիչ բողոքում նշված վիճարկվող գումարի 3 տոկոսի չափով, իսկ եթե վիճարկվում են առաջին ատյանի դատարանի կողմից բավարարված կամ չբավարարված պահանջներն ամբողջությամբ կամ բավարարված կամ չբավարարված պահանջները չեն վիճարկվում, ապա առաջին ատյանի դատարան հարուցված և բողոքարկվող հայցի հայցագնի 3 տոկոսի չափով |
| բ) ոչ գույքային բնույթի պահանջի գործերով | բազային տուրքի տասնապատիկի չափով |
| գ) հատուկ վարույթի գործերով | բազային տուրքի ութապատիկի չափով |
| 9. դատարանի դատական ակտերի դեմ բերված վճռաբեկ բողոքների համար՝ | |
| ա) գույքային պահանջի գործերով | հայցագնի 3 տոկոսի չափով, բայց ոչ պակաս բազային տուրքի տասնապատիկից և ոչ ավելի բազային տուրքի հազարապատիկից |
| բ) ոչ գույքային բնույթի պահանջի գործերով | բազային տուրքի 20-պատիկի չափով |
| գ) հատուկ վարույթի գործերով | բազային տուրքի տասնապատիկի չափով |
| 10. ***(10-րդ կետն ուժը կորցրել է 13.12.00 ՀՕ-123)*** | |
| 11. դատարանի վճռի, դատավճռի, դատարանի որոշման պատճենը (կրկնօրինակը) գործի քննությանը մասնակցող կողմերի կամ այլ անձանց գրավոր դիմումի համաձայն տալու համար | բազային տուրքի 50 տոկոսի և պատրաստված յուրաքանչյուր էջի համար՝ բազային տուրքի 15 |

| | |
|---|---|
| | տոկոսի չափով |
| 12. գործին մասնակցող անձանց հայցադիմումին կից փաստաթղթերի պատճենները գործի քննությանը մասնակցող կողմերի կամ այլ անձանց գրավոր դիմումի համաձայն տալու համար | բազային տուրքի 20 տոկոսի և պատրաստված յուրաքանչյուր էջի համար՝ բազային տուրքի 10 տոկոսի չափով |
| 13. դատական նիստի համակարգչային ձայնագրման կրիչի բնօրինակից պատճենահանված կրիչ տալու համար | պատրաստված յուրաքանչյուր կրիչի(կոմպակտ լազերային սկավառակի) համար՝ բազային տուրքի չափով: |

***(9-րդ հոդվածը խմբ. 28.12.98 ՀՕ-277, խմբ., փոփ. 12.10.99 ՀՕ-4, փոփ. 13.12.00 ՀՕ-123, լրաց., փոփ. 11.09.01 ՀՕ-219, փոփ. 29.05.02 ՀՕ-358-Ն, լրաց. 07.07.05 ՀՕ-148-Ն, խմբ. 25.12.06 ՀՕ-60-Ն, փոփ. 28.11.07 ՀՕ-282-Ն)***

**Հոդված 10. Պետական արբիտրաժ տրվող հայցադիմումների, ինչպես նաև պետական արբիտրաժի վճիռները (որոշումները) վերանայելու վերաբերյալ տրվող դիմումների համար պետական տուրքի դրույքաչափերը**

***(10-րդ հոդվածը հանվել է 28.12.98 ՀՕ-277)***

**Հոդված 11. Նոտարական գործողությունների համար պետական տուրքի դրույքաչափերը**

Նոտարական գրասենյակները նոտարական գործողությունների համար պետական տուրքը գանձում են հետևյալ դրույքաչափերով՝

| | | |
|---|---|---|
| 1. | անշարժ գույքի յուրաքանչյուր միավորի օտարման (բացառությամբ՝ նվիրատվության) պայմանագրերը վավերացնելու համար՝ | |
| ա) | գյուղատնտեսական նշանակության ոչ պետական հողամասերի կամ տնամերձերի կամ պետական կամ համայնքային սեփականության հողամասերի | բազային տուրքի հիսուն տոկոսի չափով |
| բ) | այլ անշարժ գույքի | բազային տուրքի հնգապատիկի չափով |

| | | |
|---|---|---|
| 2. | անշարժ գույքի օգտագործման (վարձակալության, անհատույց օգտագործման, ռենտայի և այլն) պայմանագրերը վավերացնելու համար` | |
| ա) | գյուղատնտեսական նշանակության ոչ պետական հողամասերի կամ տնամերձ հողամասերի, պետական կամ համայնքային սեփականություն համարվող հողամասերի, ինչպես նաև հանրակացարանների համար | բազային տուրքի հիսուն տոկոսի չափով |
| բ) | բնակարանների համար | բազային տուրքի չափով |
| գ) | այլ անշարժ գույքի համար | բազային տուրքի հնգապատիկի չափով |
| 3. | ավտոտրանսպորտային միջոցների օտարման (բացի նվիրատվությունից) պայմանագրերը վավերացնելու համար` | |
| ա) | առաջին հերթի ժառանգներին | բազային տուրքի կրկնապատիկի չափով |
| բ) | երկրորդ և երրորդ հերթի ժառանգներին | բազային տուրքի եռապատիկի չափով |
| գ) | այլ անձանց | բազային տուրքի հնգապատիկի չափով |
| 4. | գրավի (բացառությամբ անշարժ գույքի հիփոթեքի կամ շարժական գույքի կոշտ գրավի) պայմանագրերի վավերացման համար | բազային տուրքի կրկնապատիկի չափով |
| 5. | անշարժ գույքի հիփոթեքի կամ շարժական գույքի կոշտ գրավի պայմանագրերի վավերացման (բացառությամբ գյուղատնտեսական նշանակության ոչ պետական հողամասերի, տնամերձերի և այգեգործական հողամասերի յուրաքանչյուր միավորի և բնակելի նշանակության գույքի) համար | բազային տուրքի չափով |
| 6. | գյուղատնտեսական նշանակության ոչ պետական հողամասերի, տնամերձերի և այգեգործական հողամասերի յուրաքանչյուր միավորի և բնակելի նշանակության գույքի պայմանագրերի վավերացման համար | բազային տուրքի հիսուն տոկոսի չափով |
| 7. | գյուղատնտեսական նշանակության հողերի, տնամերձերի, | բազային տուրքի |

| | | |
|---|---|---|
| | այգեգործական հողերի միավորման, բաժանման պայմանագրերի վավերացման համար | հիսուն տոկոսի չափով |
| 8. | այլ պայմանագրերի վավերացման համար | բազային տուրքի կրկնապատիկի չափով |
| 9. | կտակների վավերացման համար | բազային տուրքի կրկնապատիկի չափով |
| 10. | ժառանգության իրավունքի վկայագրեր տալու և նվիրատվության պայմանագրերի վավերացման համար՝ | |
| ա) | առաջին հերթի ժառանգներին | բազային տուրքի կրկնապատիկի չափով |
| բ) | երկրորդ և երրորդ հերթի ժառանգներին | բազային տուրքի եռապատիկի չափով |
| գ) | այլ անձանց | բազային տուրքի հնգապատիկի չափով |
| 11. | անշարժ գույքի տիրապետման, օգտագործման և տնօրինման իրավունքի լիազորագրեր վավերացնելու համար | բազային տուրքի եռապատիկի չափով |
| 12. | շարժական գույքի տիրապետման, օգտագործման և տնօրինման (բացառությամբ ավտոտրանսպորտային միջոցների) լիազորագրեր վավերացնելու համար | բազային տուրքի կրկնապատիկի չափով |
| 13. | գույքային իրավունքների կառավարման լիազորագրերի վավերացման համար | բազային տուրքի չափով |
| 14. | ավտոտրանսպորտային միջոցները տնօրինելու իրավունքի լիազորագրերը վավերացնելու համար՝ | |
| ա) | առաջին հերթի ժառանգներին | բազային տուրքի չափով |
| բ) | երկրորդ և երրորդ հերթի ժառանգներին | բազային տուրքի հնգապատիկի չափով |
| գ) | այլ անձանց | բազային տուրքի քսանապատիկի |

| | | |
|---|---|---|
| | | չափով |
| 15. | ավտոտրանսպորտային միջոցները տնօրինելու իրավունքի վերալիազորման իրավունքով լիազորագրերի վավերացման համար` | |
| ա) | առաջին հերթի ժառանգներին | բազային տուրքի չափով |
| բ) | այլ անձանց | բազային տուրքի երեսնապատիկի չափով |
| 16. | այլ լիազորագրերի վավերացման համար | բազային տուրքի հիսուն տոկոսի չափով |
| 17. | ժառանգական գույքի պահպանմանն ուղղված միջոցառումների իրականացման համար | բազային տուրքի կրկնապատիկի չափով |
| 18. | փաստաթղթերի թարգմանության յուրաքանչյուր էջի իսկության վավերացման համար | բազային տուրքի հիսուն տոկոսի չափով |
| 19. | փաստաթղթերի պատճենների և դրանցից քաղվածքների յուրաքանչյուր էջի իսկության վավերացման համար | բազային տուրքի երեսուն տոկոսի չափով |
| 20. | փաստաթղթերի ստորագրությունների, այդ թվում` թարգմանչի ստորագրության յուրաքանչյուր փաստաթղթի իսկության վավերացման համար | բազային տուրքի հիսուն տոկոսի չափով |
| 21. | առանց դատարան դիմելու` գրավ դրված գույքի հաշվին գրավառուի պահանջները բավարարելու վերաբերյալ գրավառուի և գրավատուի միջև կնքված համաձայնության վավերացման համար | բազային տուրքի հնգապատիկի չափով |
| 22. | նոտարական այլ գործողությունների համար | բազային տուրքի կրկնապատիկի չափով: |

***(11-րդ հոդվածը լրաց. 19.06.98 ՀՕ-227, խմբ., լրաց., փոփ. 28.12.98 ՀՕ-277, 12.10.99 ՀՕ-4, խմբ., փոփ. 06.11.00 ՀՕ-111, փոփ. 13.12.00 ՀՕ-123, լրաց. 15.12.00 ՀՕ-136, խմբ. 12.06.02 ՀՕ-375-Ն, փոփ. 04.10.05 ՀՕ-198-Ն)***

**Հոդված 12. Քաղաքացիական կացության ակտերի գրանցման համար պետական տուրքի դրույքաչափերը**

Քաղաքացիական կացության ակտերի գրանցման համար պետական տուրքը գանձվում է հետևյալ դրույքաչափերով՝

| | |
|---|---|
| 1. ազգանվան, անվան և հայրանվան փոխման համար, ներառյալ՝ վկայական տալը | բազային տուրքի հնգապատիկի չափով |
| 2. ամուսնության գրանցման համար, ներառյալ՝ վկայական տալը | բազային տուրքի չափով |
| 3. ամուսնալուծության գրանցման համար, ներառյալ՝ վկայական տալը | բազային տուրքի տասնապատիկի չափով |
| 4. քաղաքացիական կացության ակտերի գրանցումների փոփոխություն, լրացում և ուղղում կատարելու համար, ներառյալ՝ վկայական տալը | բազային տուրքի հնգապատիկի չափով |
| 5. քաղաքացիական կացության ակտերի գրանցման մասին վկայականների կրկնօրինակը տալու | բազային տուրքի եռապատիկի չափով |
| 6. հայրություն (մայրություն) ճանաչելու համար | բազային տուրքի չափով |
| 7. օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց կողմից երեխայի որդեգրում գրանցելու համար | բազային տուրքի երեսնապատիկի չափով |
| 8. քաղաքացիական կացության ակտերի գրանցումները վերականգնելու համար, ներառյալ՝ վկայականներ տալը | բազային տուրքի եռապատիկի չափով |
| 9. քաղաքացիական կացության ակտերի | բազային տուրքի |

| | |
|---|---|
| գրանցման առկայության կամ բացակայության մասին տեղեկանք տալու համար | կրկնապատիկի չափով |
| 10. քաղաքացիական կացության ակտերի գրանցման վկայականի կրկնօրինակ կամ տեղեկանք ստանալու ծանուցում Հայաստանի Հանրապետության տարածքում ուղարկելու համար | բազային տուրքի չափով |
| 11. Օտարերկրյա պետություններից քաղաքացիների դիմումի համաձայն՝ նրանց վերաբերյալ քաղաքացիական կացության ակտերի գրանցման վկայականի կրկնօրինակ կամ տեղեկանք ստանալու համար | բազային տուրքի կրկնապատիկի չափով |
| 12. ընտանեկան կարգավիճակի վերաբերյալ տեղեկանք տալու համար | բազային տուրքի չափով |
| 13. քաղաքացիական կացության ակտերի գրանցման մեջ ուղղում, լրացում կամ փոփոխություն կատարելու վերաբերյալ տեղեկանք տալու համար | բազային տուրքի կրկնապատիկի չափով |

Քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմնի աշխատավայրից (բաժնից) դուրս կատարվող քաղաքացիական կացության ակտերի գրանցման համար պետական տուրքը գանձվում է տասնապատիկի չափով:

***(12-րդ հոդվածը լրաց. 28.12.98 ՀՕ-277, խմբ., փոփ., լրաց. 08.04.08 ՀՕ-28-Ն)***

**Հոդված 13. Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու և Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը փոփոխելու համար պետական տուրքի դրույքաչափերը**

Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու և Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը փոխելու համար պետական տուրքը գանձվում է հետևյալ դրույքաչափերով՝

| | |
|---|---|
| 1. Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու համար | բազային տուրքի չափով |

| | |
|---|---|
| 2. Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը փոխելու համար | բազային տուրքի 25-պատիկի չափով: |

**Հոդված 14. Ֆիզիկական անձանց տրվող իրավաբանական նշանակություն ունեցող փաստաթղթերի, որոշակի ծառայությունների կամ գործողությունների համար պետական տուրքի դրույքաչափերը**

Ֆիզիկական անձանց տրվող իրավաբանական նշանակություն ունեցող փաստաթղթերի, որոշակի ծառայությունների կամ գործողությունների համար պետական տուրքը գանձվում է հետևյալ դրույքաչափերով՝

| | |
|---|---|
| 1. Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագիր տալու համար | բազային տուրքի չափով |
| 2. Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող քաղաքացիություն չունեցող անձանց տրվող կացության վկայականի համար | բազային տուրքի 150 տոկոսի չափով |
| 3. օտարերկրյա քաղաքացիներին և քաղաքացիություն չունեցող անձանց Հայաստանի Հանրապետություն իրավերի փաստաթղթեր տալու համար | բազային տուրքի 5-պատիկի չափով |
| 4. Հայաստանի Հանրապետության քաղաքացիների, Հայաստանի Հանրապետության տարածքում մշտապես բնակվող օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց (բացառությամբ փախստականների) հաշվառելու կամ փաստացի բնակության վայրի մասին Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրում նշումներ կատարելու համար | բազային տուրքի չափով |
| 5. ֆիզիկական անձանց հաշվառման հասցեների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության ներքին գործերի մարմինների կողմից տեղեկանք տալու համար (բացառությամբ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության, արդարադատության նախարարության, պաշտպանության նախարարության, իրավապահ, | բազային տուրքի չափով |

| | |
|---|---|
| ֆինանսական, հարկային և անշարժ գույքի կադաստր վարող պետական մարմինների պահանջով քաղաքացիներին տրվող տեղեկանքի) | |
| 6. ***(6-րդ կետն ուժը կորցրել է 13.12.00 ՀՕ-123)*** | |
| 7. Հայաստանի Հանրապետության քաղաքացիների անձնագրերում և Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող քաղաքացիություն չունեցող անձանց կացության վկայականներում այլ պետություններում վավերական լինելու մասին նշում կատարելու համար` վավերական լինելու ժամկետի յուրաքանչյուր տարվա համար | բազային տուրքի չափով |
| 8. Հայաստանի Հանրապետությունում օտարերկրյա քաղաքացիների կացության կարգավիճակի հետ կապված փաստաթղթեր տալու համար | |
| ա) Հայաստանի Հանրապետությունում կացության ժամանակավոր կարգավիճակ և կացության քարտ տալու, ինչպես նաև հաշվառելու համար | բազային տուրքի նաև 105-պատիկի չափով |
| բ) Հայաստանի Հանրապետությունում մշտական կացության կարգավիճակ, մշտական կացության քարտ տալու, ինչպես նաև հաշվառելու համար | բազային տուրքի 140-ապատիկի չափով |
| գ) Հայաստանի Հանրապետությունում հատուկ կացության կարգավիճակ, հատուկ անձնագիր տալու, ինչպես նաև հաշվառելու համար | բազային տուրքի 150-ապատիկի չափով |
| դ) Հայաստանի Հանրապետությունում կացության ժամանակավոր կարգավիճակի ժամկետը երկարացնելու համար | բազային տուրքի 105-պատիկի չափով |
| ե) մշտական կացության քարտը փոխելու համար | բազային տուրքի 20-ապատիկի չափով |

գ) ***(«գ» ենթակետն ուժը կորցրել է 25.12.06 ՀՕ-49-Ն)***

| | |
|---|---|
| է) Հայաստանի Հանրապետության կացության մշտական և ժամանակավոր կարգավիճակ ունեցող օտարերկրյա քաղաքացիների կացության քարտը վերականգնելու համար | բազային տուրքի 12-պատիկի չափով |
| ը) Հայաստանի Հանրապետության կորցրած հատուկ անձնագրի փոխարեն նորը տալու համար | բազային տուրքի 75-ապատիկի չափով |

9. Օտարերկրյա քաղաքացիներին և քաղաքացիություն չունեցող անձանց Հայաստանի Հանրապետության պետական սահմանի անցման կետերում Հայաստանի Հանրապետության մուտքի արտոնագիր տալու համար`

| | |
|---|---|
| ա) Հայաստանի Հանրապետություն այցելության մուտքի արտոնագիր տալու համար` | |
| մինչև 120 օր ժամկետով գտնվելու իրավունքով | բազային տուրքի 15-ապատիկի չափով |
| մինչև 21 օր ժամկետով գտնվելու իրավունքով | բազային տուրքի 3-ապատիկի չափով |
| բ) Հայաստանի Հանրապետություն այցելության բազմակի մուտքի արտոնագիր տալու համար` | |
| մինչև 120 օր ժամկետով գտնվելու իրավունքով և մինչև մեկ տարի վավերականության ժամկետով | բազային տուրքի 40-ապատիկի չափով |
| մինչև 60 օր ժամկետով գտնվելու իրավունքով և մինչև 6 ամիս վավերականության ժամկետով | բազային տուրքի 20-ապատիկի չափով |
| գ) Հայաստանի Հանրապետության պաշտոնական մուտքի համար արտոնագիր տալու համար | 0 |
| դ) Հայաստանի Հանրապետության դիվանագիտական մուտքի արտոնագիր տալու համար | 0 |

| | |
|---|---|
| ե) Հայաստանի Հանրապետություն մեկ մուտքի տարանցիկ արտոնագիր տալու համար | բազային տուրքի 10-ապատիկի չափով |
| զ) Հայաստանի Հանրապետություն բազմակի մուտքի տարանցիկ արտոնագիր (մեկ տարի վավերականության) տալու համար | բազային տուրքի 18-ապատիկի չափով |
| 10. Հայաստանի Հանրապետությունից դուրս մշտական բնակության մեկնելու ելքի փաստաթղթեր ձևակերպելու համար | բազային տուրքի 15-ապատիկի չափով |
| 11. Հայաստանի Հանրապետությունից դուրս մշտական բնակության մեկնելու ելքի կորցրած փաստաթղթերը վերականգնելու համար | բազային տուրքի 20-պատիկի չափով |
| 12. Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրին կից ռուսերեն ներդիր տալու համար | բազային տուրքի չափով: |

***(14-րդ հոդվածը փոփ., լրաց. 06.07.98 ՀՕ-237, 28.12.98 ՀՕ-277, փոփ., խմբ., լրաց. 13.12.00 ՀՕ-123, խմբ. 19.11.02 ՀՕ-462-Ն, լրաց. 31.03.04 ՀՕ-59-Ն, փոփ., խմբ. 25.12.06 ՀՕ-49-Ն, խմբ. 28.04.09 ՀՕ-108-Ն)***

**Հոդված 14.1. Օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց Հայաստանի Հանրապետության մուտքի արտոնագրի ժամկետը երկարաձգելու համար պետական տուրքի դրույքաչափերը**

Մուտքի արտոնագրի երկարաձգման յուրաքանչյուր օրվա համար գանձվում է պետական տուրք՝ բազային տուրքի 50 տոկոսի չափով:

***(14.1 հոդվածը լրաց. 25.12.06 ՀՕ-49-Ն)***

**Հոդված 15. Հյուպատոսական ծառայությունների կամ գործողությունների համար պետական տուրքի դրույքաչափերը**

Հյուպատոսական ծառայությունների կամ գործողությունների համար պետական տուրքը (հյուպատոսական գանձումը) գանձվում է հետևյալ դրույքաչափերով.

Դրույքաչափերը գործակիցներով բազային տուրքի նկատմամբ (եթե այլ բան չի նշված)

| | ԱՊՀ երկրների համար | Արևմտյան Եվրոպայի երկրների համար | ԱՄՆ-ի, Կանադայի, Ավստրալիայի և այլ զարգացած պետությունների համար | Այլ պետությունների համար |
|---|---|---|---|---|
| **1. անձնագրերի հետ կապված հյուպատոսական գործողությունների համար** | | | | |
| ա) օտարերկրյա պետություններում նախկին ԽՍՀՄ քաղաքացու համաքաղաքացիական արտասահմանյան անձնագիր առաջին անգամ տալու կամ փոխանակելու համար | 53 | 79 | 53 | 43 |
| բ) օտարերկրյա պետություններում կորցրածի փոխարեն նախկին ԽՍՀՄ քաղաքացու համաքաղաքացիական արտասահմանյան նոր անձնագիր տալու համար | 63 | 106 | 69 | 53 |
| գ) օտարերկրյա պետություններում նախկին ԽՍՀՄ քաղաքացու համաքաղաքացիական արտասահմանյան անձնագրի ժամկետը երկարացնելու կամ անձնագրում փոփոխություն կատարելու համար | 19 | 27 | 19 | 14 |
| դ) ժամկետանց (երեք ամիս և ավելի) նախկին ԽՍՀՄ քաղաքացու համաքաղաքացիական արտասահմանյան անձնագրի ժամկետի երկարացում՝ յուրաքանչյուր ժամկետանց տարվա և ոչ լրիվ տարվա համար | 9 | 17 | 22 | 6 |
| ե) անձնագրում երեխաներ գրանցելու կամ դուրս գրելու համար | 14 | 27 | 17 | 9 |
| զ) անձնագրում ելքի թույլտվությունը նշելու համար | 22 | 38 | 22 | 14 |
| է) Հայաստանի Հանրապետություն վերադարձի վկայական տալու համար, եթե անձնագիրը կորցված է անձնագրի տիրոջ մեղքով | 20 | 32 | 27 | 17 |
| ը) այլ դեպքերում Հայաստանի Հանրապետություն վերադարձի վկայական տալու համար | 0 | 0 | 0 | 0 |
| թ) օտարերկրյա պետություններ մշտական բնակության ժամանողներին հյուպատոսական | 22 | 38 | 27 | 17 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| հաշվառման վերցնելու համար | | | | |
| ժ) հյուպատոսական ժամանակավոր հաշվառման վերցնելու համար (վեց ամսից ավելի գործուղման մեջ գտնվելու դեպքում) | 12 | 32 | 14 | 9 |
| ժա) հյուպատոսական հաշվառման մեջ չլինելու դեպքում՝ յուրաքանչյուր տարվա կամ ոչ լրիվ տարվա համար՝ լրացուցիչ | 27 | 32 | 12 | 17 |
| **2. միջնորդագրեր ձևակերպելու համար** | | | | |
| ա) օտարերկրյա պետություններում մշտական բնակության թույլտվություն ստանալու նպատակով՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիների միջնորդագրերը ձևակերպելու համար | 132 | 183 | 132 | 53 |
| բ) օտարերկրյա պետություններում ժամանակավոր բնակության թույլտվություն ստանալու նպատակով՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիների փաստաթղթերը ձևակերպելու համար | 53 | 79 | 53 | 27 |
| գ) ժամանակավոր հաշվառման ժամկետը երկարացնելու նպատակով՝ յուրաքանչյուր տարվա համար | 6 | 17 | 6 | 4 |
| **3. օտարերկրյա քաղաքացիներին և քաղաքացիություն չունեցող անձանց Հայաստանի Հանրապետություն մուտքի արտոնագրեր ձևակերպելու համար** | | | | |
| ա) Հայաստանի Հանրապետություն այցելության մուտքի արտոնագիր տալու համար՝ | | | | |
| մինչև 120 օր ժամկետով գտնվելու իրավունքով | բազային տուրքի 15-ապատիկի չափով | | | |
| մինչև 21 օր ժամկետով գտնվելու իրավունքով | բազային տուրքի 3-ապատիկի չափով | | | |
| բ) Հայաստանի Հանրապետություն այցելության բազմակի մուտքի արտոնագիր տալու համար՝ | | | | |
| մինչև 120 օր ժամկետով գտնվելու իրավունքով և մինչև մեկ տարի վավերականության ժամկետով | բազային տուրքի 40-ապատիկի չափով | | | |
| մինչև 60 օր ժամկետով գտնվելու իրավունքով և մինչև 6 ամիս վավերականության ժամկետով | բազային տուրքի 20-ապատիկի չափով | | | |
| գ) Հայաստանի Հանրապետության պաշտոնական մուտքի համար արտոնագիր տալու համար | 0 | | | |
| դ) Հայաստանի Հանրապետության դիվանագիտական արտոնագիր | 0 | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| տալու համար | | | | |
| ե) Հայաստանի Հանրապետություն մեկ մուտքի տարանցիկ արտոնագիր տալու համար | բազային տուրքի 10-ապատիկի չափով | | | |
| զ) Հայաստանի Հանրապետություն բազմակի մուտքի տարանցիկ արտոնագիր (մեկ տարի վավերականության) տալու համար | բազային տուրքի 18-ապատիկի չափով | | | |
| **4. քաղաքացիական կացության ակտերի գրանցման համար** | | | | |
| ա) մահվան վկայական տալու համար | 0 | 0 | 0 | 0 |
| բ) ծննդյան, ամուսնության, հայրության ճանաչման, որդեգրման և այլ վկայականներ տալու համար | 17 | 63 | 27 | 17 |
| գ) ամուսնալուծություն գրանցելու և վկայական տալու համար | 132 | 157 | 106 | 79 |
| դ) ազգանվան, անվան, հայրանվան փոփոխությունը գրանցելու համար | 43 | 79 | 32 | 27 |
| ե) կրկնակի վկայականներ տալու համար | 12 | 14 | 12 | 6 |
| **5. նոտարական գործողությունների համար** | | | | |
| ա) Հայաստանի Հանրապետության քաղաքացիներից՝ փաստաթղթերը հաստատելու համար | 9 | 27 | 22 | 6 |
| բ) օտարերկրյա քաղաքացիներից՝ փաստաթղթերը հաստատելու համար | 19 | 32 | 27 | 14 |
| գ) Հայաստանի Հանրապետության քաղաքացիներից՝ լիազորագրերի նոտարական հաստատման համար | 14 | 27 | 17 | 12 |
| դ) օտարերկրյա քաղաքացիներից՝ լիազորագրերի նոտարական հաստատման համար | 27 | 32 | 22 | 22 |
| ե) ***(«ե» ենթակետը հանվել է 28.12.98 ՀՕ-277)*** | | | | |
| զ) ավտոտրանսպորտային միջոցների նվիրատվության պայմանագրի նոտարական հաստատման համար՝ պայմանագրում նշված գումարի յոթ տոկոսը | | | | |
| է) ֆիզիկական անձանցից՝ պայմանագրերի նոտարական հաստատման համար | 22 | 29 | 17 | 17 |
| ը) իրավաբանական անձանցից՝ պայմանագրերի նոտարական հաստատման համար | 53 | 69 | 53 | 27 |
| թ) Հայաստանի Հանրապետության քաղաքացիներից՝ կրթության, աշխատանքի, քաղաքացիական կացության և այլ փաստաթղթերի պատճենների և նշված փաստաթղթերից քաղվածքների նոտարական | 9 | 29 | 17 | 6 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| վավերացման յուրաքանչյուր էջի համար | | | | |
| ժ) օտարերկրյա քաղաքացիներից՝ կրթության, աշխատանքի, քաղաքացիական կացության և այլ փաստաթղթերի պատճենների և նշված փաստաթղթերից քաղվածքների նոտարական վավերացման յուրաքանչյուր էջի համար | 12 | 36 | 22 | 9 |
| ժա) փաստաթղթերի՝ օտար լեզվից հայերեն թարգմանության և նոտարական վավերացման յուրաքանչյուր էջի համար | 12 | 29 | 22 | 9 |
| ժբ) փաստաթղթերի (բացառությամբ անձնագրերի և քաղաքացիական կացության վկայականների)՝ հայերենից օտար լեզու թարգմանության և նոտարական վավերացման յուրաքանչյուր էջի համար | 19 | 36 | 27 | 14 |
| ժբ$^{1}$) անձնագրերի և քաղաքացիական կացության վկայականների՝ հայերենից օտար լեզու թարգմանության և նոտարական վավերացման յուրաքանչյուր էջի համար | 9 | 22 | 17 | 6 |
| ժգ) քաղաքացու ողջ լինելու, որոշակի վայրում գտնվելու և այլ տեղեկանքների ձևակերպման և հաստատման համար | 14 | 27 | 12 | 9 |
| ժդ) Հայաստանի Հանրապետության քաղաքացիներից՝ ստորագրության իսկության նոտարական վավերացման համար | 6 | 17 | 17 | 4 |
| ժե) օտարերկրյա քաղաքացիներից՝ ստորագրության իսկության նոտարական վավերացման համար | 12 | 22 | 22 | 6 |
| ժզ) Հայաստանի Հանրապետության քաղաքացիներից՝ փաստաթղթերի ընդօրինակված պատճենների իսկության նոտարական վավերացման համար | 6 | 17 | 17 | 4 |
| ժէ) օտարերկրյա քաղաքացիներից՝ փաստաթղթերի ընդօրինակված պատճենների իսկության նոտարական վավերացման համար | 12 | 22 | 22 | 6 |
| ժը) Հայաստանի Հանրապետության քաղաքացիներից՝ փաստաթղթերի լուսապատճենների իսկության նոտարական վավերացման համար | 6 | 17 | 17 | 4 |
| ժթ) օտարերկրյա քաղաքացիներից՝ փաստաթղթերի լուսապատճենների իսկության նոտարական վավերացման համար | 12 | 22 | 22 | 6 |
| ի) փաստաթղթերի ընդօրինակման յուրաքանչյուր էջի համար | 6 | 17 | 17 | 4 |
| իա) ավտոտրանսպորտային միջոցներ ձեռք բերելու փաստը հավաստող փաստաթղթերի ձևակերպման համար՝ տվյալ փոխադրամիջոցի արժեքի մեկ տոկոսը, բայց ոչ պակաս, քան | 53 | 69 | 53 | 43 |
| **6. խնամակալության, ժառանգության և այլ գույքային գործեր վարելու համար** | | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| ա) խնամակալ նշանակելու մասին ակտը կազմելու համար | 14 | 17 | 14 | 9 |
| բ) ժառանգական գույքը վերցրելու և այդ գույքի պահպանման նպատակով միջոցներ ձեռնարկելու համար` գույքի արժեքի մեկ տոկոսը, բայց ոչ պակաս, քան | 22 | 14 | 17 | 17 |
| գ) շահագրգիռ անձանց խնդրանքով վերցրված գույքի ստուգման համար` գույքի արժեքի մեկ տոկոսը, բայց ոչ պակաս, քան | 12 | 12 | 12 | 6 |
| դ) կտակի նոտարական հաստատման համար | 17 | 19 | 17 | 9 |
| ե) ժառանգատուի խնդրանքով կտակի մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու համար | 9 | 12 | 9 | 6 |
| զ) ժառանգության իրավունքի մասին վկայագիր տալու համար` ժառանգական գույքի արժեքի մեկ տոկոսը, բայց ոչ պակաս, քան | 14 | 17 | 17 | 9 |
| է) ապրանքի կամ այլ գույքի վաճառքի համար` ստացված գումարի երեք տոկոսը, բայց ոչ պակաս, քան | 27 | 32 | 38 | 17 |
| ը) գտնված կամ պահանջված գույքը հանձնելու համար` գույքի արժեքի մեկ տոկոսը, բայց ոչ պակաս, քան | 19 | 24 | 22 | 12 |
| թ) փաստաթղթերի փաթեթը պահպանելու համար` ամսական | 4 | 6 | 4 | 3 |
| ժ) կտակը պահպանելու համար` ամսական | 6 | 9 | 6 | 4 |
| ժա) դրամը, արժեթղթերը և այլ արժեքները (բացի ժառանգական գույքից) պահպանելու համար` ամսական ընդհանուր գումարի 0.1 տոկոսը | | | | |
| ժբ) 100 ԱՄՆ դոլարը չգերազանցող ժառանգական կամ այլ գույքը պահպանելու համար` ամսական | 4 | 6 | 4 | 3 |
| ժգ) 100 ԱՄՆ դոլարը գերազանցող ժառանգական կամ այլ գույքը պահպանելու համար` ամսական | 9 | 12 | 12 | 6 |
| **7. նավերի և օդանավերի հյուպատոսական սպասարկման նպատակով տարբեր տեղեկանքների և փաստաթղթերի, այդ թվում` սանիտարական վկայագրի հավաստման, բեռի մասին տեղեկանք կամ վկայագիր տալու համար** | 27 | 12 | 12 | 17 |
| **8. փաստաթուղթ պահանջելու և դրա հիման վրա համապատասխան տեղեկանքներ ձևակերպելու համար** | | | | |
| ա) մինչև հինգ էջի համար | 22 | 27 | 27 | 14 |
| բ) հինգ էջից ավելի յուրաքանչյուր էջի համար` լրացուցիչ | 4 | 6 | 4 | 3 |
| **9. այլ ծառայությունների համար** | 9 | 6 | 6 | 6 |

**10. հյուպատոսական գործողությունները ոչ աշխատանքային ժամերին կատարելու համար՝ յուրաքանչյուր ժամի համար լրացուցիչ**

| | | | | |
|---|---|---|---|---|
| ա) Հայաստանի Հանրապետության քաղաքացիներից | 6 | 9 | 6 | 4 |
| բ) օտարերկրյա քաղաքացիներից | 12 | 14 | 12 | 7 |

Սույն հոդվածով սահմանված պետական տուրքի դրույքաչափերը չեն ներառում ծառայությունների կամ գործողությունների կատարման հետ կապված ծախսերը:

***(15-րդ հոդվածը փոփ., լրաց. 28.12.98 ՀՕ-277, խմբ. 25.12.06 ՀՕ-49-Ն, խմբ. 28.04.09 ՀՕ-108-Ն)***

**Հոդված 16. Պետական գրանցման համար պետական տուրքի դրույքաչափերը**

Պետական գրանցման համար պետական տուրքը գանձվում է հետևյալ դրույքաչափերով՝

| | | |
|---|---|---|
| 1. | պետական ռեգիստրում գրանցման ենթակա առևտրային կազմակերպությունների պետական գրանցման կամ նրանց առանձնացված ստորաբաժանումների հաշվառման համար | բազային տուրքի 12-ապատիկի չափով |
| 1.1 | պետական ռեգիստրում գրանցման ենթակա առևտրային կազմակերպությունների կանոնադրությունների փոփոխությունների ու լրացումների, նոր խմբագրությամբ կանոնադրությունների, վերակազմակերպմամբ պայմանավորված գործունեության դադարման, գործադիր մարմնի ղեկավարի մասին տեղեկությունների պետական գրանցման կամ նրանց առանձնացված ստորաբաժանումների կանոնադրությունների փոփոխությունների ու լրացումների, նոր խմբագրությամբ կանոնադրությունների, վերակազմակերպմամբ պայմանավորված գործունեության դադարման, գործադիր մարմնի ղեկավարի մասին տեղեկությունների և պետական գրանցամատյանում գրառման | բազային տուրքի վեցապատիկի չափով |

| | | |
|---|---|---|
| | ենթակա այլ տեղեկությունների փոփոխությունների հաշվառման համար | |
| 1.2 | պետական ռեգիստրում գրանցման ենթակա առևտրային կազմակերպությունների կամ դրանց առանձնացված ստորաբաժանումների գրանցման (հաշվառման) վկայականի փոխարեն նորը տալու համար (առանց փոփոխությունների գրանցման) | բազային տուրքի 24-ապատիկի չափով |
| 1.3 | պետական ռեգիստրում գրանցման ենթակա ոչ առևտրային կազմակերպությունների պետական գրանցման կամ դրանց առանձնացված ստորաբաժանումների հաշվառման համար, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ կետով սահմանված դեպքերի | բազային տուրքի 10-ապատիկի չափով |
| 1.4 | պետական ռեգիստրում գրանցման ենթակա ոչ առևտրային կազմակերպությունների կանոնադրությունների փոփոխությունների ու լրացումների, նոր խմբագրությամբ կանոնադրությունների, վերակազմակերպմամբ պայմանավորված գործունեության դադարման, գործադիր մարմնի ղեկավարի մասին տեղեկությունների պետական գրանցման կամ դրանց առանձնացված ստորաբաժանումների կանոնադրությունների փոփոխությունների ու լրացումների, նոր խմբագրությամբ կանոնադրությունների, վերակազմակերպմամբ պայմանավորված գործունեության դադարման, գործադիր մարմնի ղեկավարի մասին տեղեկությունների և պետական գրանցամատյանում գրառման ենթակա այլ տեղեկությունների փոփոխությունների հաշվառման համար, բացառությամբ սույն հոդվածի 3.1-րդ կետով սահմանված դեպքերի | բազային տուրքի հնգապատիկի չափով |
| 1.5 | պետական ռեգիստրում գրանցման ենթակա ոչ | բազային տուրքի |

| | | |
|---|---|---|
| | առևտրային կազմակերպությունների կամ նրանց առանձնացված ստորաբաժանումների գրանցման (հաշվառման) վկայականի փոխարեն նորը տալու համար, բացառությամբ սույն հոդվածի 3.2-րդ կետով սահմանված դեպքերի (առանց փոփոխությունների գրանցման) | 20-ապատիկի չափով |
| 1.6 | պետական գրանցում իրականացնող այլ մարմնի կողմից գրանցված այլ կազմակերպություններին, դրանց առանձնացված ստորաբաժանումներին պետական ռեգիստրի կողմից գրանցման (հաշվառման) վկայական տալու համար (առանց փոփոխությունների գրանցման) | բազային տուրքի չափով |
| 1.7 | հիմնարկների հաշվառման համար | բազային տուրքի 10-ապատիկի չափով |
| 1.8 | հիմնարկների փոփոխությունների, վերակազմակերպմամբ պայմանավորված գործունեության դադարման, գործադիր մարմնի ղեկավարի մասին տեղեկությունների հաշվառման համար | բազային տուրքի հնգապատիկի չափով |
| 1.9 | հիմնարկների հաշվառման վկայականի փոխարեն նորը տալու համար | բազային տուրքի 20-ապատիկի չափով |
| 2. | անհատ ձեռնարկատերերի պետական գրանցման համար | բազային տուրքի եռապատիկի չափով |
| 2.1 | անհատ ձեռնարկատերերի տվյալների փոփոխության պետական գրանցման համար | բազային տուրքի 150 տոկոսի չափով |
| 2.2 | անհատ ձեռնարկատերերի պետական գրանցման վկայականի փոխարեն նորը տալու համար | բազային տուրքի վեցապատիկի չափով |
| 3. | համատիրությունների պետական գրանցման կամ դրանց առանձնացված | բազային տուրքի չափով |

| | | |
|---|---|---|
| | ստորաբաժանումների հաշվառման համար | |
| 3.1 | համատիրությունների կանոնադրությունների փոփոխությունների ու լրացումների, նոր խմբագրությամբ կանոնադրությունների, վերակազմակերպմամբ պայմանավորված գործունեության դադարման, գործադիր մարմնի ղեկավարի մասին տեղեկությունների պետական գրանցման կամ դրանց առանձնացված ստորաբաժանումների կանոնադրությունների փոփոխությունների ու լրացումների, նոր խմբագրությամբ կանոնադրությունների, վերակազմակերպմամբ պայմանավորված գործունեության դադարման, գործադիր մարմնի ղեկավարի մասին տեղեկությունների և պետական գրանցամատյանում գրառման ենթակա այլ տեղեկությունների փոփոխությունների հաշվառման համար | բազային տուրքի 50 տոկոսի չափով |
| 3.2 | համատիրությունների կամ դրանց առանձնացված ստորաբաժանումների գրանցման (հաշվառման) վկայականի փոխարեն նորը տալու համար (առանց փոփոխությունների գրանցման) | բազային տուրքի կրկնապատիկի չափով |
| 4. | սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մասնակիցների գրանցամատյանում յուրաքանչյուր գրանցում կատարելու համար, բացառությամբ ընկերության ստեղծմամբ և ընկերության վերաբերյալ տեղեկությունների (ֆիրմային անվանման, գտնվելու վայրի, պետական գրանցման տվյալների, կանոնադրական կապիտալի չափի) փոփոխությամբ պայմանավորված գրանցումների | բազային տուրքի չափով |
| 4.1 | առանց սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մասնակիցների գրանցամատյանում | յուրաքանչյուր վկայագրի համար բազային տուրքի |

| | | |
|---|---|---|
| | փոփոխություններ կատարելու նկատմամբ սեփականության իրավունքի վկայագիր տալու համար | բաժնեմասի չափով |
| 4[7]. | ***(4[7] կետն ուժը կորցրել է 01.06.06 ՀՕ-109-Ն)*** | |
| 5. | բանկերը, ներդրումային հիմնադրամները, արժեթղթավորման հիմնադրամները, ապահովագրական ընկերությունները, կենսաթոշակային հիմնադրամները, գրանցելու համար | բազային տուրքի 40-պատիկի չափով |
| 5[1]. | ներդրումային հիմնադրամների, ապահովագրական ընկերությունների, կենսաթոշակային հիմնադրամների ընթացիկ պետական գրանցման համար | բազային տուրքի քսանապատիկի չափով |
| 6. | օտարերկրյա բանկերի, ներդրումային հիմնադրամների, ապահովագրական ընկերությունների, կենսաթոշակային հիմնադրամների մասնաճյուղերը գրանցելու համար | բազային տուրքի 40-պատիկի չափով |
| 7. | Հայաստանի Հանրապետությունում գրանցված բանկերի, ներդրումային հիմնադրամների, ապահովագրական ընկերությունների, կենսաթոշակային հիմնադրամների մասնաճյուղերը գրանցելու համար | բազային տուրքի 20-պատիկի չափով |
| 8. | օտարերկրյա բանկերի, ներդրումային հիմնադրամների, ապահովագրական ընկերությունների, կենսաթոշակային հիմնադրամների ներկայացուցչությունները գրանցելու համար | բազային տուրքի տասնապատիկի չափով |
| 9. | ***(9-րդ կետն ուժը կորցրել է 08.12.05 ՀՕ-249-Ն)*** | |
| 10. | ***(10-րդ կետն ուժը կորցրել է 08.04.08 ՀՕ-27-Ն)*** | |
| 11. | ***(11-րդ կետն ուժը կորցրել է 13.12.03 ՀՕ-16-Ն)*** | |

| | | |
|---|---|---|
| 12. | ***(12-րդ կետն ուժը կորցրել է 13.12.03 ՀՕ-16-Ն)*** | |
| 13. | ***(13-րդ կետն ուժը կորցրել է 12.06.02 ՀՕ-375-Ն)*** | |
| 14. | ***(14-րդ կետն ուժը կորցրել է 12.06.02 ՀՕ-375-Ն)*** | |
| 15. | ***(15-րդ կետն ուժը կորցրել է 11.10.00 ՀՕ-99)*** | |
| 16. | արժեթղթերի ազդագրի գրանցման համար՝ | |
| ա) | եթե արժեթղթերի ազդագրերը գրանցվում են Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից | բազային տուրքի 50-ապատիկի չափով |
| բ) | եթե արժեթղթերի ազդագրերը գրանցվում են ֆոնդային բորսայի կողմից | բազային տուրքի 25-ապատիկի չափով |
| 17. | ավտոմեքենայի պետական համարանիշ տալու համար | բազային տուրքի 12-պատիկի չափով |
| 18. | ավտոմեքենայի կորցրած պետական համարանիշը վերականգնելու համար | բազային տուրքի 24-պատիկի չափով |
| 19. | ***(19-րդ կետն ուժը կորցրել է 13.12.00 ՀՕ-123)*** | |
| 20. | ջրային փոխադրամիջոցները գրանցելու համար | բազային տուրքի տասնապատիկի չափով |
| 21. | գյուղատնտեսական ինքնագնաց մեքենաների գրանցման և պետական համարանիշներ տալու համար | բազային տուրքի հնգապատիկի չափով |
| 22. | գյուղատնտեսական ինքնագնաց մեքենաների կորցրած պետական համարանիշը վերականգնելու համար | բազային տուրքի տասնապատիկի չափով |
| 23. | տրակտորային կցանքների պետական համարանիշեր տալու համար | բազային տուրքի եռապատիկի չափով |

| | | |
|---|---|---|
| 24. | տրակտորային կցանքների պետական համարանիշեր վերականգնելու համար | բազային տուրքի վեցապատիկի չափով |
| 25. | դիվանագիտական ներկայացուցչություններին, հյուպատոսական հիմնարկներին և միջազգային կազմակերպություններին պատկանող տրանսպորտային միջոցների պետական համարանիշներ տալու համար | բազային տուրքի 25-պատիկի չափով |
| 26. | ավտոմեքենայի (մոտոցիկլետի) տեխնիկական անձնագիր (գրանցման վկայական) տալու համար | բազային տուրքի վեցապատիկի չափով |
| 27. | ավտոմեքենայի (մոտոցիկլետի) կորցրած տեխնիկական անձնագրի (գրանցման վկայականի) կրկնօրինակ տալու համար | բազային տուրքի 12-պատիկի չափով |
| 28. | տրանսպորտային միջոցների տարեկան տեխնիկական զննությունը ճանապարհային ոստիկանության մարմինների կողմից անցկացնելու վերաբերյալ համապատասխան փաստաթուղթ տալու համար | բազային տուրքի 6-պատիկի չափով |
| 28.1 | Լիցենզառուներին տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության համապատասխան նմուշի փաստաթուղթ տրամադրելու համար | բազային տուրքի 250 տոկոսի չափով |
| 29. | գյուղատնտեսական ինքնագնաց մեքենաների տարեկան տեխնիկական զննությունն անցնելու վերաբերյալ համապատասխան փաստաթուղթ տալու համար | բազային տուրքի 150 տոկոսի չափով |
| 30. | ***(30-րդ կետն ուժը կորցրել է 29.11.06 ՀՕ-229-Ն)*** | |
| 31. | ***(31-րդ կետն ուժը կորցրել է 13.12.00 ՀՕ-123)*** | |
| 32. | ջրային փոխադրամիջոցները վերագրանցելու, հաշվառումից հանելու, ինչպես նաև դրանց գրանցման տվյալների փոփոխության հետ | բազային տուրքի չափով |

| | | |
|---|---|---|
| | կապված որևէ գործողություն կատարելու համար | |
| 33. | գյուղատնտեսական ինքնագնաց մեքենաները գրանցելու, վերագրանցելու, հաշվառումից հանելու, ինչպես նաև դրանց գրանցման տվյալների փոփոխության հետ կապված որևէ գործողություն կատարելու համար | բազային տուրքի 50 տոկոսի չափով |
| 33.1 | Ինքնագնաց ճանապարհաշինարարական մեքենաների և մեխանիզմների գրանցման համար | բազային տուրքի 150 տոկոսի չափով |
| 34. | ***(34-րդ ենթակետն ուժը կորցրել է 02.05.01 ՀՕ-181)*** | |
| 35. | դեղերի, դեղագործական արտադրանքի, բժշկական նշանակության առարկաների, բժշկական գործիքների, սարքերի և տեխնիկայի պետական գրանցման համար՝ | |
| ա) | նոր ակտիվ նյութեր պարունակող դեղերի առաջին դեղաձևի կամ դեղաչափի, նոր դեղի նոր դեղաձևի կամ դեղաչափի համար | բազային տուրքի 70-պատիկի չափով |
| բ) | հայտնի դեղերի նոր զուգորդումների համար | բազային տուրքի 40-պատիկի չափով |
| գ) | վերարտադրված (գեներիկ) դեղերի առաջին դեղաձևի կամ դեղաչափի, յուրաքանչյուր հաջորդ դեղաձևի կամ դեղաչափի համար | բազային տուրքի 40-պատիկի չափով |
| դ) | նոր ցուցումների համար | բազային տուրքի տասնապատիկի չափով |
| ե) | դեղանյութերի պետական գրանցման համար | բազային տուրքի 30-պատիկի չափով |
| զ) | բուսապատրաստուկներ, այլ բնական ծագում | բազային տուրքի |

| | | |
|---|---|---|
| | ունեցող պատրաստուկներ | տասնապատիկի չափով |
| է) | հոմեոպաթիկ դեղերի համար | բազային տուրքի կրկնապատիկի չափով |
| ը) | ախտորոշիչ միջոցների «ին վիտրո» (in vitro), կենսաբանական ակտիվ միացություններ պարունակող սննդային հավելումների, բուժական նշանակության մանկական սննդի և դեղարարական արտադրանքի համար | բազային տուրքի 20-պատիկի չափով |
| թ) | բժշկական նշանակության առարկաների, բժշկական գործիքների, սարքերի և տեխնիկայի 1-ին դասի համար | բազային տուրքի տասնապատիկի չափով |
| ժ) | բժշկական նշանակության առարկաների, բժշկական գործիքների, սարքերի և տեխնիկայի 2-րդ դասի համար | բազային տուրքի 20-պատիկի չափով |
| ժա) | բժշկական նշանակության առարկաների, բժշկական գործիքների, սարքերի և տեխնիկայի 3-րդ դասի համար | բազային տուրքի 30-պատիկի չափով |
| ժբ) | դեղագործական արտադրանքի, արտադրող ընկերության անվանման, փաթեթավորման և արտադրանքի անվտանգության, արդյունավետության և որակի վրա չազդող այլ փոփոխությունների հետ կապված գրանցման հավաստագիրը վերաձևակերպելու համար | բազային տուրքի հնգապատիկի չափով |
| 36. | գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցում կատարելու համար՝ | |
| ա) | անշարժ գույքի պետական գրանցում կատարելու (բացառությամբ սեփականաշնորհվող պետական, հանրային և համայնքային բնակարանային ֆոնդի բնակարանների) | բազային տուրքի չափով |

| | | |
|---|---|---|
| բ) | Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին տնամերձ, այգեգործական (ամառանոցային) և բնակելի տան շինարարության և դրա սպասարկման համար հատկացված և որպես սեփականություն նրանց անցած հողերի և ամրակայված գույքի պետական գրանցում կատարելու (բացառությամբ սահմանամերձ, լեռնային և ծայրամասային բնակավայրերի) | բազային տուրքի հնգապատիկի չափով |
| գ) | Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ, լեռնային և ծայրամասային բնակավայրերում տնամերձ, այգեգործական (ամառանոցային) և բնակելի տան շինարարության և դրա սպասարկման համար հատկացված և որպես սեփականություն նրանց անցած հողերի և ամրակայված գույքի պետական գրանցում կատարելու | բազային տուրքի 30 տոկոսի չափով |
| դ) | հասարակական և արտադրական նշանակության անշարժ գույքի օտարման (վաճառք, փոխանակություն, նվիրատվություն) պայմանագրերի պետական գրանցում կատարելու՝ | |
| դա) | «փոքր» օբյեկտների, բացառությամբ «դբ» կետով նշված անշարժ գույքի (համաձայն «Պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2 հոդվածի) | բազային տուրքի քսանապատիկի չափով |
| դբ) | գյուղատնտեսական նշանակության անշարժ գույքի և մինչև 30 քառակուսի մետր կրպակների, տաղավարների, ավտոտնակների և այլ անշարժ գույքի | բազային տուրքի տասնապատիկի չափով |
| դգ) | հասարակական և արտադրական | բազային տուրքի |

| | | |
|---|---|---|
| | նշանակության այլ անշարժ գույքի | քառասնապատիկի չափով |
| ե) | անհատական բնակելի տների, այգետնակների պետական գրանցում կատարելու | բազային տուրքի չափով |
| զ) | անշարժ գույքի առանձին միավորների (ավտոտնակ, հացատուն, գոմ և այլ կառույցներ) պետական գրանցում կատարելու | բազային տուրքի չափով |
| է) | բնակելի նշանակության անշարժ գույքի` հողի (բացառությամբ գյուղատնտեսական նշանակության սեփականաշնորհված հողերի) և ամրակայված գույքի օտարման (ձեռքբերման) պայմանագրի պետական գրանցում կատարելու | բազային տուրքի քսանապատիկի չափով |
| ը) | գյուղատնտեսական նշանակության սեփականաշնորհված հողամասերի յուրաքանչյուր միավորի օտարման (ձեռքբերման) պայմանագրի պետական գրանցում կատարելու | բազային տուրքի չափով |
| ը[1]) | Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին` Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ, լեռնային, ծայրամասային բնակավայրերում գյուղատնտեսական նշանակության սեփականաշնորհված հողամասերի յուրաքանչյուր միավորի (բացառությամբ տնամերձ հողամասերի) օտարման (ձեռքբերման) պայմանագրի պետական գրանցում կատարելու համար | բազային տուրքի 30% չափով |
| թ) | կտակի կամ ժառանգման միջոցով ձեռք բերված անշարժ գույքի պետական գրանցում կատարելու | բազային տուրքի չափով |
| ժ) | պետական և համայնքային սեփականություն | բազային տուրքի |

| | | |
|---|---|---|
| | համարվող գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության և ենթավարձակալության պայմանագրի պետական գրանցում կատարելու | չափով |
| ժա) | պետական և համայնքային սեփականություն համարվող հողերի օտարման, վարձակալության և ենթավարձակալության պայմանագրի պետական գրանցում կատարելու | բազային տուրքի չափով |
| ժբ) | շենքերի և շինությունների վարձակալության և ենթավարձակալության պայմանագրի պետական գրանցում կատարելու | բազային տուրքի չափով |
| ժգ) | Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին` սեփականություն համարվող անշարժ գույքի վարձակալության պայմանագրի պետական գրանցում կատարելու | բազային տուրքի չափով |
| ժգ[1]) | Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին` գյուղատնտեսական նշանակության սեփականաշնորհված հողամասերի յուրաքանչյուր միավորի վարձակալության պայմանագրի պետական գրանցում կատարելու համար | բազային տուրքի չափով |
| ժդ) | անշարժ գույքի օգտագործման իրավունքի պայմանագրերի պետական գրանցում կատարելու | բազային տուրքի չափով |
| ժե) | անշարժ գույքի (բացառությամբ գյուղատնտեսական նշանակության սեփականաշնորհված հողերի) և բնակելի նշանակության անշարժ գույքի գրավի (հիփոթեքի) պայմանագրերի գրանցում կատարելու և նշված գույքի հիփոթեքի առարկայի օտարման վրա սահմանափակում (արգելադրում) կիրառելու համար | բազային տուրքի չափով |

| | | |
|---|---|---|
| ժե[1]) | գյուղատնտեսական նշանակության սեփականաշնորհված հողամասերի յուրաքանչյուր միավորի, ինչպես նաև բնակելի նշանակության անշարժ գույքի գրավի (հիփոթեքի) պայմանագրի պետական գրանցում կատարելու և նշված հողամասերի գրավի (հիփոթեքի) առարկայի օտարման վրա սահմանափակում (արգելադրում) կիրառելու համար | բազային տուրքի չափով |
| ժե[2]) | շարժական գույքի (բացառությամբ գյուղատնտեսական ինքնագնաց մեքենաների) գրավի կամ լիզինգի պայմանագրով վարձակալության իրավունքի գրանցում կատարելու համար | բազային տուրքի կրկնապատիկի չափով |
| ժե[3]) | գյուղատնտեսական ինքնագնաց մեքենաների գրավի կամ լիզինգի պայմանագրով վարձակալության իրավունքի գրանցում կատարելու համար | բազային տուրքի չափով |
| ժզ) | անշարժ գույքի փոխանակման պայմանագրերի պետական գրանցում կատարելու | բազային տուրքի չափով |
| ժէ) | հողը մշտական օգտագործման հանձնելու որոշումների պետական գրանցում կատարելու | բազային տուրքի չափով |
| ժը) | հողամասերի սահմանները փոփոխելու, միավորելու և բաժանելու մասին պայմանագրերի պետական գրանցում կատարելու | բազային տուրքի չափով |
| ժթ) | անշարժ գույքի նկատմամբ իրավունքի սահմանափակման, այդ թվում` սերվիտուտի պայմանագրի պետական գրանցում կատարելու համար | բազային տուրքի չափով |
| ի) | անշարժ գույքի արտոնված օգտագործման իրավունքի արտոնագրի պետական գրանցում կատարելու համար | բազային տուրքի չափով |

| | | |
|---|---|---|
| իա) | անշարժ գույքի նկատմամբ ժամկետային, հայեցողական, անժամկետ, ցմահ իրավազորության պետական գրանցում կատարելու համար | բազային տուրքի հնգապատիկի չափով |
| իբ) | անշարժ գույքի սեփականության իրավունքի առանձին իրավազորությունների պետական գրանցում կատարելու համար | բազային տուրքի չափով |
| իբ[1]) | անշարժ գույքի նկատմամբ այլ իրավունքների պետական գրանցման համար | բազային տուրքի չափով |
| իգ) | անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի դադարման մասին որոշումների, վճիռների և դատավճիռների պետական գրանցում կատարելու համար | բազային տուրքի հնգապատիկի չափով |
| իդ) | հողի մշտական օգտագործման և հողի ու շենքերի, շինությունների վարձակալության իրավունքի դադարման մասին որոշումների, վճիռների և դատավճիռների պետական գրանցում կատարելու համար | բազային տուրքի հնգապատիկի չափով |
| իե) | անշարժ գույքից կամ նրա մի մասից սեփականատիրոջ, օգտագործողի հրաժարվելու մասին որոշումների պետական գրանցում կատարելու համար | բազային տուրքի հնգապատիկի չափով |
| իզ) | ***(«իզ» ենթակետը հանվել է 12.10.99 ՀO-4)*** | |
| իէ) | ***(«իէ» ենթակետը հանվել է 12.10.99 ՀO-4)*** | |
| իը) | ***(«իը» ենթակետը հանվել է 12.10.99 ՀO-4)*** | |
| 37. | չափման միջոցների տեսակի հաստատման, ստանդարտ նմուշների հաստատման պետական գրանցում կատարելու համար | բազային տուրքի հնգապատիկի չափով |
| 38. | անշարժ հուշարձանների հետախուզության և հնագիտական պեղումների թույլտվության և | |

| | | |
|---|---|---|
| | պետական գրանցման համար` | |
| ա) | ֆիզիկական անձանցից | բազային տուրքի կրկնապատիկի չափով |
| բ) | իրավաբանական անձանցից և իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկություններից | բազային տուրքի քառապատիկի չափով |
| 39. | ***(39-րդ կետն ուժը կորցրել է 11.10.07 ՀՕ-205-Ն)*** | |
| 40. | Մտավոր սեփականության օբյեկտի գրանցման և այդ ապրանքների ցանկացած մաքսային ռեժիմով բացթողումը կասեցնելու մասին դիմումը վերադաս մաքսային մարմնի կողմից ընդունելու համար ուղղ: | բազային տուրքի 20-ապատիկի չափով |

Սույն հոդվածի 35-րդ և 36-րդ կետերով սահմանված պետական տուրքի դրույքաչափերը չեն ներառում ծառայությունների կամ գործողությունների կատարման հետ կապված ծախսերը:

***(16-րդ հոդվածը լրաց., փոփ. 19.06.98 ՀՕ-227, 28.12.98 ՀՕ-277, փոփ., խմբ., լրաց. 12.10.99 ՀՕ-4, 11.10.00 ՀՕ-99, 13.12.00 ՀՕ-123, լրաց. 15.12.00 ՀՕ-136, փոփ. 02.05.01 ՀՕ-181, խմբ., փոփ. 12.06.02 ՀՕ-375-Ն, փոփ. 13.12.03 ՀՕ-16-Ն, խմբ. 11.05.04 ՀՕ-77-Ն, փոփ. 26.05.04 ՀՕ-84-Ն, 04.10.05 ՀՕ-198-Ն, 08.12.05 ՀՕ-249-Ն, 01.06.06 ՀՕ-109-Ն, խմբ. 27.11.06 ՀՕ-201-Ն, խմբ., փոփ. 09.04.07 ՀՕ-168-Ն, փոփ., լրաց. 29.11.06 ՀՕ-229-Ն, լրաց. 05.12.06 ՀՕ-238-Ն, փոփ. 11.10.07 ՀՕ-205-Ն, լրաց. 26.05.08 ՀՕ-109-Ն)***

**Հոդված 17. Մշակութային արժեքները արտահանելու կամ ժամանակավոր արտահանելու իրավունքի վկայագիր տալու համար պետական տուրքի դրույքաչափերը**

Մշակութային արժեքները արտահանելու կամ ժամանակավոր արտահանելու իրավունքի վկայագիր տալու համար պետական տուրքը գանձվում է հետևյալ դրույքաչափերով`

ա) մշակութային արժեքների արտահանման կամ ժամանակավոր արտահանման իրավունքի վկայագիրը տալու համար` բազային տուրքի հնգապատիկի չափով.

բ) ***(«բ» կետն ուժը կորցրել է 06.12.04 ՀՕ-177-Ն)***

գ) ***(«գ» կետն ուժը կորցրել է 06.12.04 ՀՕ-177-Ն)***

դ) ***(«դ» կետն ուժը կորցրել է 06.12.04 ՀՕ-177-Ն)***

ե) ***(«ե» կետն ուժը կորցրել է 06.12.04 ՀՕ-177-Ն)***

զ) մշակութային արժեքներն արտահանելու կամ ժամանակավոր արտահանելու իրավունքի վկայագրի կրկնօրինակը տալու համար՝ բազային տուրքի եռապատիկի չափով:

Սույն հոդվածով սահմանված պետական տուրքի դրույքաչափերը չեն ներառում ծառայությունների կամ գործողությունների կատարման հետ կապված ծախսերը:

***(17-րդ հոդվածը լրաց. 28.12.98 ՀՕ-277, փոփ., լրաց. 13.12.00 ՀՕ-123, խմբ., փոփ. 06.12.04 ՀՕ-177-Ն)***

**Հոդված 18. Գյուտերի, օգտակար մոդելների, արդյունաբերական նմուշների, ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների, ֆիրմային անվանումների, ինտեգրալ միկրոսխեմաների տոպոլոգիաների իրավական պահպանության հետ կապված իրավաբանական նշանակություն ունեցող գործողությունների համար պետական տուրքի դրույքաչափերը**

Գյուտերի, օգտակար մոդելների, արդյունաբերական նմուշների, ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների, ֆիրմային անվանումների, ինտեգրալ միկրոսխեմաների տոպոլոգիաների իրավական պահպանության հետ կապված իրավաբանական նշանակություն ունեցող գործողությունների համար պետական տուրքը գանձվում է հետևյալ դրույքաչափերով (բազային տուրքի նկատմամբ գործակիցներով).

**1. գյուտերի իրավական պահպանության գծով՝**

| | | |
|---|---|---|
| ա) | գյուտի արտոնագրի հայտ ներկայացնելու, այդ թվում՝ միջազգային հայտն ազգային փուլ փոխադրելու համար | 20 |
| | եթե հայտը վերաբերում է միասնական մտահղացում կազմող գյուտերի խմբի, ապա մեկից ավելի յուրաքանչյուր գյուտի համար՝ լրացուցիչ | 5 |
| բ) | միջազգային կամ ցուցահանդեսային առաջնություն խնդրարկելու համար (յուրաքանչյուրի համար) | 10 |
| գ) | գյուտի նախնական փորձաքննության, որոշման հետ չհամաձայնելու դեպքում բողոքարկման խորհուրդ բողոք ներկայացնելու համար | 15 |

| | | |
|---|---|---|
| դ) | *(ենթակետն ուժը կորցրել է 10.06.08 ՀՕ-113-Ն)* | |
| ե) | գյուտի նկարագրության հրապարակման համար՝ հինգ էջից ավելի յուրաքանչյուր էջի համար | 2,5 |
| զ) | գյուտի ԽՍՀՄ հեղինակային վկայագրի գործողության դեմ բողոքարկման խորհուրդ բողոք ներկայացնելու համար | 50 |
| է) | *(ենթակետն ուժը կորցրել է 10.06.08 ՀՕ-113-Ն)* | |
| ը) | գյուտի արտոնագիր տալու վերաբերյալ լիազոր մարմնի որոշման հետ չհամաձայնելու դեպքում բողոքարկման խորհուրդ բողոք ներկայացնելու համար | 20 |
| թ) | գյուտի արտոնագիր տալու համար | 15 |
| ժ) | գյուտի արտոնագիր տալու դեմ բողոքարկման խորհուրդ բողոք ներկայացնելու համար | 64 |
| ժա) | հայտատուի բաց թողած ժամկետները վերականգնելու դիմում ներկայացնելու համար | 15 |
| ժբ) | գյուտի հայտը օգտակար մոդելի հայտի փոխակերպելու դիմում ներկայացնելու համար | 10 |
| ժգ) | գյուտի արտոնագիրը գործողության մեջ պահելու համար (յուրաքանչյուր տարվա համար)՝ | |
| | երկրորդ, երրորդ տարվա համար | 20 |
| | չորրորդ, հինգերորդ տարվա համար | 25 |
| | վեցերորդ, յոթերորդ տարվա համար | 30 |
| | ութերորդ, իններորդ տարվա համար | 38 |
| | տասներորդ, տասնմեկերորդ տարվա համար | 48 |
| | տասներկուերորդ, տասներեքերորդ տարվա համար | 58 |
| | տասնչորսերորդ, տասնհինգերորդ տարվա համար | 68 |
| | տասնվեցերորդ, տասնյոթերորդ տարվա համար | 80 |
| | տասնութերորդ, տասնիններորդ, քսաներորդ տարվա համար | 100 |
| | քսանմեկերորդ, քսաներկուերորդ տարվա համար | 130 |
| | քսաներեքերորդ, քսանչորսերորդ, քսանհինգերորդ տարվա համար | 160 |
| ժդ) | արտոնագրի զիջման մասին պայմանագրի գրանցման համար (պայմանագրով նախատեսված յուրաքանչյուր արտոնագրի համար) | 38 |
| ժե) | լիցենզային պայմանագրի գրանցման համար, եթե այն վերաբերում է՝ | |
| | մեկ արտոնագրի | 60 |
| | մի քանի արտոնագրի (մեկից ավելի յուրաքանչյուրի համար՝ լրացուցիչ) | 45 |
| ժզ) | արտոնագրի զիջման մասին գրանցված պայմանագրի կամ գրանցված | 10 |

| | | |
|---|---|---|
| | լիցենզային պայմանագրի մեջ փոփոխություններ կատարելու համար | |
| ժէ) | արտոնագրի կրկնակը տալու համար | 10 |
| ժը) | գյուտերի Հայաստանի Հանրապետության պետական գրանցամատյանում փոփոխություն կատարելու համար | 8 |
| ժթ) | գյուտի արտոնագիր ստանալու իրավունքի զիջման մասին դիմում ներկայացնելու համար | 15 |
| ի) | սահմանված ժամկետները երկարաձգելու մասին դիմում ներկայացնելու համար | 8 |
| իա) | առաջնության ճշգրտման կամ լրացումներ կատարելու մասին դիմում ներկայացնելու համար | 10 |
| իբ) | ***(ենթակետն ուժը կորցրել է 10.06.08 ՀՕ-113-Ն)*** | |
| իէ) | առաջնության իրավունքը վերականգնելու մասին դիմում ներկայացնելու համար | 10 |
| իը) | հայտի նկատմամբ իրավունքները վերականգնելու մասին դիմում ներկայացնելու համար | 10 |
| իթ) | հայտատուի դիմումի համաձայն՝ հայտը վաղաժամկետ հրապարակելու համար | 10 |
| լ) | արտոնագրաունակության մասին եզրակացություն հրապարակելու մասին դիմում ներկայացնելու համար | 20 |
| լա) | տեխնիկայի մակարդակի մասին տեղեկատվություն տրամադրելու համար | 100 |
| իգ) | բաց լիցենզիա տալու մասին դիմում ներկայացնելու համար | 2 |
| իդ) | բաց լիցենզիա տալու մասին դիմումը հետ կանչելու համար | 10 |
| իե) | լրացուցիչ իրավական պահպանություն տրամադրելու համար | 50 |
| իզ) | արտոնագրի գործողությունը վերականգնելու համար | 50 |
| **2.** | **օգտակար մոդելների իրավական պահպանության հետ կապված գործողությունների գծով՝** | |
| ա) | օգտակար մոդելի արտոնագրի հայտ ներկայացնելու, այդ թվում՝ միջազգային հայտն ազգային փուլ փոխադրելու համար | 20 |
| | եթե հայտը վերաբերում է միասնական մտահղացում կազմող օգտակար մոդելների խմբի, ապա մեկից ավելի յուրաքանչյուր օգտակար մոդելի համար լրացուցիչ | 5 |
| բ) | միջազգային կամ ցուցահանդեսային առաջնություն խնդրարկելու համար (յուրաքանչյուրի համար) | 10 |
| գ) | օգտակար մոդելի հայտի փորձաքննության որոշման հետ չհամաձայնելու դեպքում բողոքարկման խորհուրդ բողոք ներկայացնելու համար | 15 |

| | | |
|---|---|---|
| դ) | օգտակար մոդելի արտոնագիր տալու համար | 15 |
| ե) | օգտակար մոդելի նկարագրության հրապարակման համար` հինգ էջից ավելի յուրաքանչյուր էջի համար | 2.5 |
| զ) | օգտակար մոդելի արտոնագիր տալու դեմ բողոքարկման խորհուրդ բողոք ներկայացնելու համար | 50 |
| է) | հայտատուի բաց թողած ժամկետները վերականգնելու դիմում ներկայացնելու համար | 15 |
| ը) | օգտակար մոդելի հայտը գյուտի հայտի փոխակերպելու դիմում ներկայացնելու համար | 10 |
| թ) | օգտակար մոդելի արտոնագիրը գործողության մեջ պահելու համար (յուրաքանչյուր տարվա համար)` | |
| | երկրորդ, երրորդ տարվա համար | 20 |
| | չորրորդ, հինգերորդ տարվա համար | 25 |
| | վեցերորդ, յոթերորդ տարվա համար | 30 |
| | ութերորդ, իններորդ տարվա համար | 38 |
| | տասներորդ տարվա համար | 50 |
| ժ) | արտոնագրի զիջման մասին պայմանագրի գրանցման համար (պայմանագրով նախատեսված յուրաքանչյուր արտոնագրի համար) | 38 |
| ժա) | լիցենզային պայմանագրի գրանցման համար, եթե այն վերաբերում է` | |
| | մեկ արտոնագրի | 60 |
| | մի քանի արտոնագրի (մեկից ավելի յուրաքանչյուրի համար` լրացուցիչ) | 45 |
| ժբ) | արտոնագրի զիջման մասին գրանցված պայմանագրի կամ գրանցված լիցենզային պայմանագրի մեջ փոփոխություններ կատարելու համար | 10 |
| ժգ) | արտոնագրի կրկնակը տալու համար | 10 |
| ժդ) | օգտակար մոդելների` Հայաստանի Հանրապետության պետական գրանցամատյանում փոփոխություն կատարելու համար | 8 |
| ժե) | օգտակար մոդելի արտոնագիր ստանալու իրավունքի զիջման մասին դիմում ներկայացնելու համար | 15 |
| ժզ) | սահմանված ժամկետները երկարաձգելու մասին դիմում ներկայացնելու համար | 8 |
| ժէ) | առաջնության ճշգրտման կամ լրացումներ կատարելու մասին դիմում ներկայացնելու համար | 10 |
| ժը) | բաց լիցենզիա տալու մասին դիմում ներկայացնելու համար | 2 |
| ժթ) | բաց լիցենզիա տալու մասին դիմումը հետ կանչելու համար | 10 |
| ի) | արտոնագրի գործողությունը վերականգնելու համար | 30 |

| | | |
|---|---|---|
| իա) | ***(ենթակետն ուժը կորցրել է 10.06.08 ՀՕ-113-Ն)*** | |
| իբ) | առաջնության իրավունքը վերականգնելու մասին դիմում ներկայացնելու համար | 10 |
| իգ) | հայտի նկատմամբ իրավունքները վերականգնելու մասին դիմում ներկայացնելու համար | 10 |
| **3.** | **արդյունաբերական նմուշի իրավական պահպանության հետ կապված գործողությունների գծով՝** | |
| ա) | արդյունաբերական նմուշի գրանցման հայտ ներկայացնելու համար | 20 |
| | եթե հայտը պարունակում է 2-5 իրեր՝ լրացուցիչ | 20 |
| | եթե հայտը պարունակում է 5-ից ավելի իրեր՝ լրացուցիչ | 30 |
| բ) | միջազգային կամ ցուցահանդեսային առաջնություն խնդրարկելու համար (յուրաքանչյուրի համար) | 10 |
| գ) | փորձաքննության որոշման հետ չհամաձայնելու դեպքում բողոքարկման խորհուրդ բողոք ներկայացնելու համար | 15 |
| դ) | արդյունաբերական նմուշի վկայագիր տալու համար | 15 |
| ե) | արդյունաբերական նմուշի վկայագիր տալու դեմ կամ արդյունաբերական նմուշի ԽՍՀՄ վկայագրի գործողության դեմ բողոքարկման խորհուրդ բողոք ներկայացնելու համար | 50 |
| զ) | հայտատուի բաց թողած ժամկետները վերականգնելու դիմում ներկայացնելու համար | 15 |
| է) | արդյունաբերական նմուշի նկատմամբ իրավունքների երկարաձգման համար՝ | |
| | առաջին հինգ տարվա համար | 60 |
| | երկրորդ հինգ տարվա համար | 180 |
| | երրորդ հինգ տարվա համար | 360 |
| | չորրորդ հինգ տարվա համար | 540 |
| | հինգերորդ հինգ տարվա համար | 720 |
| ը) | արտոնագրի զիջման մասին պայմանագրի գրանցման համար (պայմանագրով նախատեսված յուրաքանչյուր արտոնագրի համար) | 38 |
| թ) | լիցենզային պայմանագրի գրանցման համար, եթե այն վերաբերում է՝ | |
| | մեկ արտոնագրի | 60 |
| | մի քանի արտոնագրի (մեկից ավելի յուրաքանչյուրի համար՝ լրացուցիչ) | 45 |
| ժ) | արդյունաբերական նմուշի նկատմամբ իրավունքների զիջման մասին գրանցված պայմանագրի կամ գրանցված լիցենզային պայմանագրի մեջ փոփոխություններ կատարելու համար | 10 |

| | | |
|---|---|---|
| ժա) | վկայագրի կրկնակը տալու համար | 10 |
| ժբ) | արդյունաբերական նմուշների Հայաստանի Հանրապետության պետական գրանցամատյանում փոփոխություն կատարելու համար | 8 |
| ժգ) | արդյունաբերական նմուշի վկայագիր ստանալու իրավունքը զիջելու մասին դիմում ներկայացնելու համար | 15 |
| ժդ) | սահմանված ժամկետները երկարաձգելու մասին դիմում ներկայացնելու համար | 8 |
| ժե) | առաջնության ճշգրտման կամ լրացումներ կատարելու մասին դիմում ներկայացնելու համար | 10 |
| ժզ) | բաց լիցենզիա տալու մասին դիմում ներկայացնելու համար | 2 |
| ժէ) | բաց լիցենզիա տալու մասին դիմումը հետ կանչելու համար | 10 |
| ժը) | արդյունաբերական նմուշի նկատմամբ իրավունքները վերականգնելու համար | 40 |
| ժթ) | *(ենթակետն ուժը կորցրել է 10.06.08 ՀՕ-113-Ն)* | |
| ի) | առաջնության իրավունքը վերականգնելու մասին դիմում ներկայացնելու համար | 10 |
| իա) | հայտի նկատմամբ իրավունքները վերականգնելու մասին դիմում ներկայացնելու համար | 10 |
| **4.** | **ապրանքային և սպասարկման նշանների իրավական պահպանության հետ կապված գործողությունների գծով`** | |
| ա) | նշանի գրանցման հայտ ներկայացնելու համար | 30 |
| բ) | կոնվենցիայով առաջնություն խնդրարկելու համար | 10 |
| գ) | նշանի փորձաքննություն անցկացնելու համար | 40 |
| | ապրանքների և ծառայությունների միջազգային դասակարգմանը համապատասխան մեկից ավելի յուրաքանչյուր դասի համար` լրացուցիչ | 15 |
| դ) | հայտի նախնական փորձաքննության որոշման հետ չհամաձայնելու դեպքում բողոքարկման խորհուրդ բողոք ներկայացնելու համար | 30 |
| ե) | նշանի փորձաքննության որոշման հետ չհամաձայնելու դեպքում բողոքարկման խորհուրդ բողոք ներկայացնելու համար | 50 |
| զ) | հայտատուի բաց թողած ժամկետները վերականգնելու մասին դիմում ներկայացնելու համար | 30 |
| է) | նշանի գրանցման համար | 50 |
| | կոլեկտիվ նշանի դեպքում | 90 |
| ը) | նշանը գրանցելու կամ գրանցման գործողության դեմ բողոքարկման խորհուրդ բողոք ներկայացնելու համար | 90 |

| | | |
|---|---|---|
| թ) | նշանը գրանցելու գործողության ժամկետը երկարացնելու համար | 120 |
| | ապրանքների և ծառայությունների միջազգային դասակարգմանը համապատասխան մեկից ավելի յուրաքանչյուր դասի համար` լրացուցիչ | 10 |
| ժ) | նշանների` Հայաստանի Հանրապետության պետական գրանցամատյանում և նշանի վկայականում փոփոխություն կատարելու համար | 18 |
| ժա) | նշանը զիջելու մասին պայմանագրի գրանցման համար (պայմանագրով նախատեսված յուրաքանչյուր նշանի համար) | 60 |
| ժբ) | լիցենզային պայմանագրի գրանցման համար, եթե այն վերաբերում է` | |
| | մեկ նշանի | 60 |
| | մի քանի նշանի (մեկից ավելի յուրաքանչյուրի համար` լրացուցիչ) | 50 |
| ժգ) | գրանցված լիցենզային պայմանագրի կամ զիջման մասին պայմանագրի մեջ փոփոխություններ կատարելու համար | 25 |
| ժդ) | նշանի վկայականի կրկնակը տալու համար | 30 |
| ժե) | նշանի միջազգային գրանցման կամ տարածքային ընդարձակման հայտ ներկայացնելու համար | 50 |
| ժզ) | Հայաստանի Հանրապետությունում գրանցված և գրանցման ներկայացված ապրանքային նշանների տվյալների հիմնապաշարում որոնում անցկացնելու համար՝ | |
| | ապրանքների և ծառայությունների միջազգային դասակարգման համապատասխան յուրաքանչյուր դասով՝ ներկայացված բառային կամ պատկերային նշանին նույնական կամ նման նշանների | 20 |
| | ապրանքների և ծառայությունների միջազգային դասակարգման համապատասխան յուրաքանչյուր դասով՝ ներկայացված համակցված նշանին նույնական կամ նման նշանների | 40 |
| | մեկ սեփականատիրոջը և (կամ) հայտատուին պատկանող նշանների | 60 |
| ժէ) | ապրանքային նշանի վկայական ստանալու իրավունքը զիջելու մասին դիմում ներկայացնելու համար | 38 |
| ժը) | փորձաքննության հարցման պատասխանի ներկայացման ժամկետը երկարաձգելու մասին հայտատուի կողմից դիմում ներկայացնելու համար | 8 |
| ժթ) | հայտատուի նախաձեռնությամբ ապրանքային նշանի հայտի նյութերում լրացումներ, ճշգրտումներ և ուղղումներ կատարելու համար (յուրաքանչյուրի) | 10 |
| ի) | ապրանքային նշանը Հայաստանի Հանրապետությունում հանրահայտ ճանաչելու մասին դիմում ներկայացնելու համար | 250 |

| | | |
|---|---|---|
| իա) | նշանների միջազգային գրանցման մասին մադրիդյան համաձայնագրի արձանագրության 8(7)(a) հոդվածի համաձայն յուրաքանչյուր միջազգային գրանցման նկատմամբ Հայաստանի Հանրապետությունը 3ter հոդվածին համապատասխան նշելու համար՝ | |
| | մեկ դասի ապրանքների համար | 100 |
| | մեկից ավելի յուրաքանչյուր դասի համար | 10 |
| | այդպիսի միջազգային գրանցումը երկարաձգելու համար՝ | |
| | մեկ դասի ապրանքների համար | 100 |
| | մեկից ավելի յուրաքանչյուր դասի համար | 10 |
| իբ) | կրկնական փորձաքննության անցկացման մասին դիմումի ներկայացման ժամկետը երկարաձգելու համար | 8 |
| իգ) | ապրանքային նշանի հայտը զատելու մասին դիմում ներկայացնելու համար | 10 |
| իդ) | ապրանքային նշանի գրանցումը բաժանելու մասին դիմում ներկայացնելու համար | 15 |
| իե) | ապրանքային նշանը Հայաստանի Հանրապետությունում հանրահայտ ճանաչելու դեմ բողոք ներկայացնելու համար | 90 |
| իզ) | Հայաստանի Հանրապետությունում հանրահայտ ճանաչված ապրանքային նշանի իրավական պահպանության դեմ բողոք ներկայացնելու համար | 150 |
| իէ) | ապրանքային նշանի գրանցման գործողությունը դրա չօգտագործման պատճառով վաղաժամկետ դադարեցնելու մասին դիմում ներկայացնելու համար | 90 |
| **5.** | **ապրանքների ծագման տեղանունների իրավական պահպանության հետ կապված գործողությունների գծով՝** | |
| ա) | ապրանքի ծագման տեղանվան գրանցման և (կամ) տեղանվան օգտագործման իրավունքի հայտ ներկայացնելու համար | 30 |
| բ) | ապրանքի ծագման տեղանվան փորձաքննություն անցկացնելու համար | 38 |
| գ) | հայտի նախնական փորձաքննության որոշման հետ չհամաձայնելու դեպքում բողոքարկման խորհուրդ բողոք ներկայացնելու համար | 30 |
| դ) | տեղանվան գրանցումը մերժելու և (կամ) տեղանվան օգտագործման իրավունք չընձեռելու մասին փորձաքննության որոշման հետ չհամաձայնելու դեպքում բողոքարկման խորհուրդ բողոք ներկայացնելու համար | 50 |
| ե) | հայտատուի բաց թողած ժամկետները վերականգնելու մասին դիմում ներկայացնելու համար | 30 |

զ) ապրանքի ծագման տեղանունն օգտագործելու իրավունքի վկայական տալու համար 50

է) ապրանքի ծագման տեղանվան գրանցման և տեղանվան օգտագործման իրավունքի վկայական տալու դեմ բողոքարկման խորհուրդ բողոք ներկայացնելու համար 90

ը) ապրանքի ծագման տեղանվան օգտագործման իրավունքի վկայականի գործողության ժամկետը երկարացնելու համար 100

թ) ապրանքի ծագման տեղանվան՝ Հայաստանի Հանրապետության պետական գրանցամատյանում և ապրանքի ծագման տեղանվան վկայականում փոփոխություն կատարելու համար 18

ժ) փորձաքննության հարցման պատասխանը ներկայացնելու ժամկետը երկարացնելու մասին հայտատուի կողմից դիմում ներկայացնելու համար 8

ժա) հայտատուի նախաձեռնությամբ ապրանքի ծագման տեղանվան հայտի նյութերում լրացումներ, ճշգրտումներ և ուղղումներ կատարելու համար (յուրաքանչյուրի) 10

ժբ) ապրանքի ծագման տեղանվան օգտագործման իրավունքի վկայականի կրկնակը տալու համար 2

ժգ) կրկնական փորձաքննության անցկացման մասին դիմումի ներկայացման ժամկետը երկարաձգելու համար 8

**6. ֆիրմային անվանումների իրավական պահպանության հետ կապված գործողությունների գծով՝**

ա) ֆիրմային անվանման գրանցման հայտ ներկայացնելու, փորձաքննություն անցկացնելու և վկայական տալու համար 5

անվանափոխության դեպքում, երբ գրանցման ներկայացված ֆիրմային անվանման մեջ պահպանված է «Ֆիրմային անվանումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան նախկինում գրանցված ֆիրմային անվանման տարբերակող նշանակության անունը 1

բ) փորձաքննության որոշման հետ չհամաձայնելու դեպքում բողոքարկման խորհուրդ բողոք ներկայացնելու համար 5

գ) ֆիրմային անվանման վկայականի կրկնակը տալու համար 2

**7. ինտեգրալ միկրոսխեմաների տոպոլոգիաների իրավական պահպանության հետ կապված գործողությունների գծով՝**

ա) ինտեգրալ միկրոսխեմայի տոպոլոգիայի գրանցման հայտ ներկայացնելու և վկայական տալու համար 20

բ) ինտեգրալ միկրոսխեմայի տոպոլոգիայի նկատմամբ զույքային 30

բացառիկ իրավունքները զիջելու մասին պայմանագրի գրանցման համար

| | | |
|---|---|---|
| գ) | ինտեգրալ միկրոսխեմայի տոպոլոգիայի նկատմամբ գույքային իրավունքները փոխանցելու պայմանագրի գրանցման համար | 20 |
| դ) | ինտեգրալ միկրոսխեմայի տոպոլոգիայի գրանցման վկայականի կրկնակը տալու համար | 2 |
| **8.** | **այլ գործողությունների գծով՝** | |
| ա) | արտոնագրային տեղեկատվության յուրաքանչյուր էջի համար | 0.2 |
| բ) | արդյունաբերական սեփականության օբյեկտների՝ Հայաստանի Հանրապետության պետական գրանցամատյաններից քաղվածքներ տալու, ինչպես նաև հայտի մասին տեղեկություններ տրամադրելու համար (յուրաքանչյուր օբյեկտի համար) | 2 |
| գ) | արդյունաբերական սեփականության օբյեկտի հայտի վավերացված պատճենը տալու համար | 10 |
| դ) | գյուտի միջազգային հայտի առաքման համար | 32 |
| ե) | Եվրասիական արտոնագրային կոնվենցիայի համաձայն փորձաքննության պահանջներին (ձևական հատկանիշներով) հայտի համապատասխանությունը ստուգելու և առաքելու համար | 30 |
| զ) | արտոնագրային հավատարմատարի թեկնածուի որակավորման քննություն ընդունելու համար | 8 |
| է) | արտոնագրային հավատարմատարի գրանցման կամ գրանցման մեջ փոփոխություն կատարելու համար | 4 |
| ը) | արդյունաբերական սեփականության օբյեկտների ասին պաշտոնական հրապարակումներում հայտատուի մեղքով տեղ գտած ակնհայտ սխալներն ուղղելու մասին նրա կողմից դիմում ներկայացնելու համար (յուրաքանչյուր սխալի համար) | 2.5 |
| թ) | լիցենզային կամ զիջման մասին պայմանագրերի գրանցման կամ գրանցումը մերժելու մասին լիազոր մարմնի որոշման հետ չհամաձայնելու դեպքում բողոքարկման խորհուրդ բողոք ներկայացնելու համար | 50 |

***(2-րդ մասն ուժը կորցրել է 10.06.08 ՀՕ-113-Ն)***

***(Վերնագիրը փոփ. 26.10.99 ՀՕ-14, 13.12.00 ՀՕ-123)***

***(18-րդ հոդվածը փոփ. 28.12.98 ՀՕ-277, խմբ., փոփ. 26.10.99 ՀՕ-14, փոփ., խմբ., լրաց. 13.12.00 ՀՕ-123, փոփ., լրաց. 02.05.01 ՀՕ-178, խմբ., լրաց. 29.05.02 ՀՕ-358-Ն, լրաց. 18.11.03 ՀՕ-32-Ն, լրաց., փոփ., խմբ. 24.11.04 ՀՕ-140-Ն, 05.12.06 ՀՕ-255-Ն, փոփ., լրաց., խմբ. 10.06.08 ՀՕ-113-Ն)***

**Հոդված 19.** Լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելու

**նպատակով լիցենզիաներ, արտոնագրեր (թույլտվություններ) տալու համար պետական տուրքի դրույքաչափերը**

Լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելու նպատակով լիցենզիաներ, արտոնագրեր (թույլտվություններ) տալու համար պետական տուրքը գանձվում է հետևյալ դրույքաչափերով.

**1. ԱՌԵՎՏՐԻ ԲՆԱԳԱՎԱՌ**

| | | |
|---|---|---|
| 1.1 | «Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ» (ԱՏԳ ԱԱ) դասակարգչի 710210000, 710221000, 710231000 ծածկագրերին դասվող բնական` մշակված կամ չմշակված, բայց չշրջանակված կամ չամրացված ալմաստների առուվաճառքի, ներմուծման, արտահանման, փոխադրման համար` տարեկան | բազային տուրքի 1000-ապատիկի չափով |

**2. ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ**

| | | |
|---|---|---|
| 2.1 | դեղերի արտադրության համար` տարեկան | բազային տուրքի 200-ապատիկի չափով |
| 2.2 | ***(2.2 ենթակետն ուժը կորցրել է 22.02.07 ՀՕ-117-Ն)*** | |
| 2.3 | ***(2.3 ենթակետն ուժը կորցրել է 22.02.07 ՀՕ-117-Ն)*** | |
| 2.4 | դեղատնային գործունեության համար` տարեկան | բազային տուրքի 50-ապատիկի չափով |
| 2.5 | կազմակերպությունների կամ անհատ ձեռնարկատերերի կողմից բժշկական օգնության և սպասարկման իրականացման համար` տարեկան | բազային տուրքի 50-ապատիկի չափով |
| 2.6 | գենետիկ ինժեներիայի գործունեության | բազային տուրքի |

| | | |
|---|---|---|
| | համար` տարեկան | 50-ապատիկի չափով |
| 2.7 | բժշկական միջին մասնագիտական կրթական ծրագրի իրականացման համար` տարեկան | բազային տուրքի 150-ապատիկի չափով |
| 2.7[1]. | բժշկական բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրի իրականացման համար` տարեկան | բազային տուրքի 300-ապատիկի չափով |

**3. ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ**

| | | |
|---|---|---|
| 3.1 | արտարժույթի առուվաճառքի համար` տարեկան | բազային տուրքի 50-ապատիկի չափով |
| 3.2 | արտարժույթի առուվաճառքի սակարկությունների կազմակերպման համար` տարեկան | բազային տուրքի 200-ապատիկի չափով |
| 3.3 | արժույթի դիլերային-բրոքերային առքուվաճառքի համար` տարեկան | բազային տուրքի 100-ապատիկի չափով |

**4. ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ**

| | | |
|---|---|---|
| 4.1 | ***(4.1 ենթակետն ուժը կորցրել է 22.02.07 ՀՕ-117-Ն)*** | |
| 4.2 | ներդրումային ծառայությունների մատուցման համար | տարեկան բազային տուրքի 50-ապատիկի չափով |
| 4.3 | կարգավորվող շուկայի օպերատորի, Կենտրոնական դեպոզիտարիայի գործունեության համար | տարեկան բազային տուրքի 100-ապատիկի չափով |

**5. ԲԱՆԿԱՅԻՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՎԱՐԿԱՅԻՆ**

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌ

| | | |
|---|---|---|
| 5.1 | բանկային գործունեության համար` տարեկան | բազային տուրքի 3000-ապատիկի չափով |
| 5.2 | գրավատների կազմակերպման համար` տարեկան | բազային տուրքի 100-ապատիկի չափով |
| 5.3 | ինվեստիցիոն ընկերությունների, ինվեստիցիոն հիմնադրամների գործունեության համար` տարեկան | բազային տուրքի 200-ապատիկի չափով |
| 5.4 | կյանքի յուրաքանչյուր դասի ապահովագրության իրականացման համար` տարեկան | բազային տուրքի 700-ապատիկի չափով |
| 5.4[1]. | ոչ կյանքի յուրաքանչյուր դասի ապահովագրության իրականացման համար` տարեկան | բազային տուրքի 250-ապատիկի չափով |
| 5.4[2]. | յուրաքանչյուր դասի վերաապահովագրության իրականացման համար` տարեկան | բազային տուրքի 2000-ապատիկի չափով |
| 5.5 | ինկասացիոն ծառայությունների մատուցման համար` տարեկան | բազային տուրքի 300-ապատիկի չափով |
| 5.6 | ապահովագրական բրոքերային գործունեության համար` տարեկան | բազային տուրքի 100-ապատիկի չափով |
| 5.7 | աուդիտորական ծառայությունների իրականացման համար` | |
| | ֆիզիկական անձանցից` տարեկան | բազային տուրքի 25-ապատիկի չափով |
| | իրավաբանական անձանցից` տարեկան | բազային տուրքի 250-ապատիկի չափով |

| | | |
|---|---|---|
| 5.8 | վարկային գործունեության համար՝ տարեկան | բազային տուրքի 500-ապատիկի չափով |
| 5.9 | դրամական (փողային) փոխանցումների իրականացման համար՝ տարեկան | բազային տուրքի 250-ապատիկի չափով |
| 5.10 | վճարային գործիքների և վճարահաշվարկային փաստաթղթերի պրոցեսինգի և քլիրինգի իրականացման համար՝ տարեկան | բազային տուրքի 250-ապատիկի չափով |
| 5.11 | վարկային բյուրոյի գործունեության համար տարեկան՝ | բազային տուրքի 500-ապատիկի չափով |
| 5.12 | *(5.12 կետն ուժը կորցրել է 24.11.04 ՀՕ-151-Ն)* | |

**6. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ**

| | | |
|---|---|---|
| 6.1 | անասնաբուժության համար՝ տարեկան | բազային տուրքի 5-ապատիկի չափով |
| 6.2 | *(6.2 ենթակետն ուժը կորցրել է 22.02.07 ՀՕ-117-Ն)* | |
| 6.3 | անասնաբուժության բնագավառում օգտագործվող կենսապատվաստուկների, շիճուկների և ախտորոշիչ միջոցների արտադրության համար տարեկան՝ | բազային տուրքի 200-ապատիկի չափով |

**7. ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԲՆԱԳԱՎԱՌ**

| | | |
|---|---|---|
| 7.1 | բնական գազի ներկրման համար՝ տարեկան | բազային տուրքի 10000-ապատիկի չափով |
| 7.2 | բնական գազի փոխադրման համար՝ տարեկան | բազային տուրքի 15000-ապատիկի |

| | | |
|---|---|---|
| | | չափով |
| 7.3 | բնական գազի բաշխման համար` տարեկան | բազային տուրքի 15000-ապատիկի չափով |
| 7.4 | բնական գազի արտահանման համար` տարեկան | բազային տուրքի 10000-ապատիկի չափով |
| 7.5 | էլեկտրական էներգիայի արտադրության համար, այդ թվում` | |
| 7.5.1 | մինչև 6 մՎտ (ներառյալ) դրվածքային հզորության կայանների համար` տարեկան | բազային տուրքի 100-ապատիկի չափով |
| 7.5.2 | 6-15 մՎտ (ներառյալ) դրվածքային հզորության կայանների համար` տարեկան | բազային տուրքի 1000-ապատիկի չափով |
| 7.5.3 | 15-25 մՎտ (ներառյալ) դրվածքային հզորության կայանների համար` տարեկան | բազային տուրքի 2500-ապատիկի չափով |
| 7.5.4 | 25-50 մՎտ (ներառյալ) դրվածքային հզորության կայանների համար` տարեկան | բազային տուրքի 5000-ապատիկի չափով |
| 7.5.5 | 50 մՎտ-ից բարձր դրվածքային հզորության կայանների համար` տարեկան | բազային տուրքի 15000-ապատիկի չափով |
| 7.6 | էլեկտրական էներգիայի ներկրման համար` տարեկան | բազային տուրքի 5000-ապատիկի չափով |
| 7.7 | էլեկտրական էներգիայի հաղորդման համար` տարեկան | բազային տուրքի 15000-ապատիկի չափով |
| 7.8 | էլեկտրական էներգիայի բաշխման համար` տարեկան | բազային տուրքի 30000-ապատիկի չափով |
| 7.9 | էլեկտրական էներգիայի արտահանման | բազային տուրքի |

| | | |
|---|---|---|
| | համար՝ տարեկան | 5000-ապատիկի չափով |
| 7.10 | ջերմային էներգիայի արտադրության համար՝ տարեկան | բազային տուրքի 100-ապատիկի չափով |
| 7.11 | ջերմային էներգիայի փոխադրման համար՝ տարեկան | բազային տուրքի 100-ապատիկի չափով |
| 7.12 | ջերմային էներգիայի բաշխման համար՝ տարեկան | բազային տուրքի 100-ապատիկի չափով |
| 7.13 | էլեկտրաէներգետիկական և գազամատակարարման համակարգերի օպերատորի ծառայությունների համար՝ տարեկան | բազային տուրքի 5000-ապատիկի չափով |
| 7.14 | էներգետիկ շուկային մատուցվող ծառայությունների համար՝ տարեկան | բազային տուրքի 5000-ապատիկի չափով |
| 7.15 | էլեկտրական էներգիայի, ջերմային էներգիայի և բնական գազի համակարգերում նոր արտադրական հզորությունների կառուցման (վերականգնման) համար՝ տարեկան | բազային տուրքի 100-ապատիկի չափով |
| | **8*. ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ** | |
| 8.1 | նախադպրոցական կրթական ծրագրերի իրականացման համար | բազային տուրքի 10-ապատիկի չափով |
| 8.2 | տարրական ընդհանուր կրթական ծրագրերի իրականացման համար | բազային տուրքի 15-ապատիկի չափով |
| 8.3 | հիմնական ընդհանուր կրթական ծրագրերի իրականացման համար | բազային տուրքի 25-ապատիկի չափով |

| | | |
|---|---|---|
| 8.4 | միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթական ծրագրերի իրականացման համար | բազային տուրքի 25-ապատիկի չափով |
| 8.5 | հատուկ ընդհանուր կրթական ծրագրերի իրականացման համար | բազային տուրքի 25-ապատիկի չափով |
| 8.5.1 | նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագրերի իրականացման համար | բազային տուրքի 30-ապատիկի չափով |
| 8.5.2 | միջին մասնագիտական կրթական ծրագրերի իրականացման համար, բացառությամբ բժշկական միջին մասնագիտական ծրագրերի | բազային տուրքի 150-ապատիկի չափով |
| 8.5.3 | բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրերի իրականացման համար, բացառությամբ բժշկական բարձրագույն կրթական ծրագրերի | բազային տուրքի 300-ապատիկի չափով |

**9. ՀԵՌԱՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ**

| | | |
|---|---|---|
| 9.1. | հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի շահագործման համար` այդ թվում` | |
| 9.1.1. | Երևան քաղաքում և միաժամանակ մեկ կամ մի քանի մարզերում ցանցի շահագործման համար` տարեկան | բազային տուրքի 500-ապատիկի չափով |
| 9.1.2. | Երևան քաղաքի տարածքում ցանցի շահագործման համար` տարեկան | բազային տուրքի 300-ապատիկի չափով |
| 9.1.3. | Երևան քաղաքը չներառող` մեկից ավելի մարզերի տարածքում ցանցի շահագործման համար` տարեկան | բազային տուրքի 200-ապատիկի չափով |
| 9.1.4. | մեկ մարզի տարածքում ցանցի շահագործման համար` տարեկան | բազային տուրքի 100-ապատիկի չափով |

| | | | |
|---|---|---|---|
| | 9.2. | ձայնային ծառայությունների մատուցման համար՝ տարեկան | բազային տուրքի 100-ապատիկի չափով |
| | 9.3. | շարժական կապի ծառայությունների մատուցման համար՝ տարեկան | բազային տուրքի 100-ապատիկի չափով |
| | 9.4. | ***(9.4 ենթակետն ուժը կորցրել է 22.02.07 ՀՕ-117-Ն)*** | |
| | 9.5. | տվյալների հաղորդման և ինտերնետ հասանելիության ծառայությունների մատուցման համար՝ տարեկան | բազային տուրքի 100-ապատիկի չափով |
| | 9.6. | հեռուստառադիոհաղորդումների հեռարձակման համար՝ այդ թվում՝ | |
| ա) | 9.6.1. | հեռուստահաղորդումների հեռարձակման համար՝ | |
| | 9.6.1.1. | Երևան քաղաքում և միաժամանակ մեկ կամ մի քանի մարզերում հեռարձակման համար՝ տարեկան | բազային տուրքի 300-ապատիկի չափով |
| | 9.6.1.2. | Երևան քաղաքի տարածքում հեռարձակման համար՝ տարեկան | բազային տուրքի 200-ապատիկի չափով |
| | 9.6.1.3. | Երևան քաղաքը չներառող՝ մեկից ավելի մարզերի տարածքում հեռարձակման համար՝ տարեկան | բազային տուրքի 100-ապատիկի չափով |
| | 9.6.1.4. | մեկ մարզի տարածքում հեռարձակման համար՝ տարեկան | բազային տուրքի 50-ապատիկի չափով |
| բ) | 9.6.2. | ռադիոհաղորդումների հեռարձակման համար՝ | |
| | 9.6.2.1. | Երևան քաղաքում և միաժամանակ մեկ կամ մի քանի մարզերում հեռարձակման համար՝ տարեկան | բազային տուրքի 150-ապատիկի չափով |
| | 9.6.2.2. | Երևան քաղաքի տարածքում հեռարձակման համար՝ տարեկան | բազային տուրքի 100-ապատիկի |

| | | |
|---|---|---|
| | | չափով |
| 9.6.2.3. | Երևան քաղաքը չներառող` մեկից ավելի մարզերի տարածքում հեռարձակման համար` տարեկան | բազային տուրքի 50-ապատիկի չափով |
| 9.6.2.4. | մեկ մարզի տարածքում հեռարձակման համար` տարեկան | բազային տուրքի 25-ապատիկի չափով |

Սույն կետի 9.2.-9.5.-րդ ենթակետերով սահմանված գործունեության տեսակներից յուրաքանչյուրը 9.1.-րդ ենթակետով սահմանված գործունեության տեսակի հետ միաժամանակ իրականացվելու դեպքում կիրառվում է դրանց համար սահմանված պետական տուրքի դրույքաչափերից առավելագույնը:

Միաժամանակ հեռուստահաղորդումների և ռադիոհաղորդումների հեռարձակման գործունեության իրականացման դեպքում կիրառվում է դրանց համար սահմանված պետական տուրքի դրույքաչափերից առավելագույնը:

| | | |
|---|---|---|
| **9.7.** | **Հեռուստառադիոհաղորդումների հեռարձակման արտոնագիր (լիցենզիա) ստանալու համար` այդ թվում`** | |
| **9.7.1.** | **հեռուստահաղորդումների եթերային հեռարձակման համար՝** | |
| 9.7.1.1. | Երևան քաղաքի տարածքում և մեկ կամ մի քանի մարզերի տարածքներում հեռուստահաղորդումների եթերային հեռարձակման համար` | բազային տուրքի 500-ապատիկի չափով |
| 9.7.1.2. | Երևան քաղաքի տարածքում հեռուստահաղորդումների եթերային հեռարձակման համար` | բազային տուրքի 400-ապատիկի չափով |
| 9.7.1.3. | մի քանի մարզերի տարածքներում հեռուստահաղորդումների եթերային հեռարձակման համար` | բազային տուրքի 400-ապատիկի չափով |
| 9.7.1.4. | մեկ մարզի տարածքում հեռուստահաղորդումների եթերային հեռարձակման համար` | բազային տուրքի 250-ապատիկի չափով |
| | **9.7.2. ռադիոհաղորդումների եթերային** | |

| | | |
|---|---|---|
| | **հեռարձակման համար՝** | |
| 9.7.2.1. | Երևան քաղաքի տարածքում և մեկ կամ մի քանի մարզերի տարածքներում ռադիոհաղորդումների եթերային հեռարձակման համար՝ | բազային տուրքի 250-ապատիկի չափով |
| 9.7.2.2. | Երևան քաղաքի տարածքում ռադիոհաղորդումների եթերային հեռարձակման համար՝ | բազային տուրքի 200-ապատիկի չափով |
| 9.7.2.3. | մի քանի մարզերի տարածքներում ռադիոհաղորդումների եթերային հեռարձակման համար՝ | բազային տուրքի 200-ապատիկի չափով |
| 9.7.2.4. | մեկ մարզի տարածքում ռադիոհաղորդումների եթերային հեռարձակման համար՝ | բազային տուրքի 150-ապատիկի չափով |
| | **9.7.3. հեռուստահաղորդումների կաբելային հեռարձակման համար՝** | |
| 9.7.3.1. | Երևան քաղաքի տարածքում և մեկ կամ մի քանի մարզերի տարածքներում հեռուստահաղորդումների կաբելային հեռարձակման համար՝ | բազային տուրքի 500-ապատիկի չափով |
| 9.7.3.2. | Երևան քաղաքի տարածքում հեռուստահաղորդումների կաբելային հեռարձակման համար՝ | բազային տուրքի 400-ապատիկի չափով |
| 9.7.3.3. | մի քանի մարզերի տարածքներում հեռուստահաղորդումների կաբելային հեռարձակման համար՝ | բազային տուրքի 250-ապատիկի չափով |
| 9.7.3.4. | մեկ մարզի տարածքում հեռուստահաղորդումների կաբելային հեռարձակման համար՝ | բազային տուրքի 100-ապատիկից 150-ապատիկի չափով |
| | 9[1]. ՓՈՍՏԱՅԻՆ ԿԱՊԻ ԲՆԱԳԱՎԱՌ | |
| 9.1.1 | փոստային կապի ծառայությունների, բացառությամբ դրամական միջոցների փոստային փոխադրությունների, մատուցման համար՝ տարեկան | բազային տուրքի 5000-ապատիկի չափով |

**10. ՄԱՔՍԱՅԻՆ ԲՆԱԳԱՎԱՌ**

| | | |
|---|---|---|
| 10.1 | մաքսային պահեստում, մաքսային հսկողության ներքո ապրանքների պահպանության համար` տարեկան | բազային տուրքի 1000-ապատիկի չափով |
| 10.2 | անմաքս առևտրի խանութում մաքսային հսկողության ներքո ապրանքների իրացման համար` տարեկան | բազային տուրքի 500-ապատիկի չափով |
| 10.3 | ազատ մաքսային պահեստում ապրանքների պահպանության գործունեության համար` տարեկան | բազային տուրքի 2000-ապատիկի չափով |
| 10.4 | մաքսային միջնորդական գործունեության համար` տարեկան | բազային տուրքի 200-ապատիկի չափով |
| 10.5 | մաքսային փոխադրողի գործունեության համար` տարեկան | բազային տուրքի 1000-ապատիկի չափով |
| 10.6 | ազատ տնտեսական գոտու կազմակերպման գործունեության համար՝ տարեկան | բազային տուրքի 3000-ապատիկի չափով |
| 10.7 | ազատ տնտեսական գոտու շահագործման գործունեության համար՝ տարեկան | բազային տուրքի 1000-ապատիկի չափով |
| 10.8 | Մաքսային հսկողության տարածքի կազմակերպման գործունեության համար` տարեկան | բազային տուրքի 1000-ապատիկի չափով |

**11. ԱՏՈՄԱՅԻՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ**

| | | |
|---|---|---|
| 11.1 | միջուկային տեղակայանքների հրապարակի ընտրման համար՝ տարեկան | բազային տուրքի 1000-ապատիկի չափով |
| 11.2 | ռադիոակտիվ թափոնների | բազային տուրքի |

| | | |
|---|---|---|
| | պահեստարանների հրապարակի ընտրման համար՝ տարեկան | 500-ապատիկի չափով |
| 11.3 | ռադիոակտիվ թափոնների գերեզմանոցների հրապարակի ընտրման համար՝ տարեկան | բազային տուրքի 500-ապատիկի չափով |
| 11.4 | միջուկային տեղակայանքների նախագծման համար՝ տարեկան | բազային տուրքի 1000-ապատիկի չափով |
| 11.5 | ռադիոակտիվ թափոնների պահեստարանների նախագծման համար՝ տարեկան | բազային տուրքի 500-ապատիկի չափով |
| 11.6 | ռադիոակտիվ թափոնների գերեզմանոցների նախագծման համար՝ տարեկան | բազային տուրքի 500-ապատիկի չափով |
| 11.7 | միջուկային տեղակայանքների կառուցման համար՝ տարեկան | բազային տուրքի 1000-ապատիկի չափով |
| 11.8 | ռադիոակտիվ թափոնների պահեստարանների կառուցման համար՝ տարեկան | բազային տուրքի 500-ապատիկի չափով |
| 11.9 | ռադիոակտիվ թափոնների գերեզմանոցների կառուցման համար՝ տարեկան | բազային տուրքի 500-ապատիկի չափով |
| 11.10 | ***(11.10 ենթակետն ուժը կորցրել է 22.02.07 ՀՕ-117-Ն)*** | |
Նոտարական գործողություններ իրականացնող մարմիններում պետական տուրքի վճարումից ազատվում են՝

ա) ֆիզիկական անձինք՝ պետության կամ համայնքի օգտին կտակի կամ գույքի նվիրատվության պայմանագիրը վավերացնելու համար.

բ) պետությանը կամ համայնքին ժառանգության իրավունքով անցած գույքի մասին նրանց վկայագիր, ինչպես նաև դրանց ստացման անհրաժեշտ փաստաթղթեր տալու համար.

գ) ֆիզիկական անձինք՝ ժառանգության իրավունքի մասին նրանց վկայագիր տալու համար, եթե՝

- բնակելի տունը՝ հողամասով բնակարանը կամ բնակարանային-շինարարական կոոպերատիվում փայն անցնում է ժառանգատուի հետ համատեղ բնակվող այնպիսի անձանց, ովքեր ժառանգատուի մահվան օրվա դրությամբ եղել են հաշվառված նույն տանը և նրա մահից հետո շարունակում են բնակվել այնտեղ,

- ժառանգության իրավունքի օբյեկտ են համարվում բանկերում եղած ավանդները, անձնական և գույքային ապահովագրության գծով

ապահովագրական գումարները, պետական փոխառության պարտատոմսերը, աշխատավարձի գումարները, կենսաթոշակները.

դ) ֆիզիկական անձինք՝ թոշակների և նպաստների ստացման վերաբերյալ լիազորագրերը վավերացնելու համար.

ե) մայրերը՝ բազմազավակության շքանշաններով և մեդալներով իրենց պարգևատրելու մասին փաստաթղթերի պատճենների իսկությունը վավերացնելու համար.

զ) այն քաղաքացիների ժառանգները, ովքեր իրենց աշխատանքի (ծառայության) վայրում կազմակերպությունների հաշվին ապահովագրված են եղել դժբախտ պատահարի հետևանքով մահվան կամ զոհվելու դեպքերից՝ ապահովագրական վարձատրության ժառանգման իրավունքը հաստատող վկայագիր տալու համար.

է) երկրորդ աշխարհամարտի հաշմանդամները և այն անձինք, ովքեր հաշմանդամ են դարձել Հայաստանի Հանրապետությունը, նախկին ԽՍՀՄ-ը պաշտպանելիս կամ զինվորական այլ պարտականություններ կատարելիս վիրավորվելու, կոնտուզիայի, խեղման կամ ռազմաճակատում գտնվելու հետ կապված հիվանդության հետևանքով, նախկին պարտիզան հաշմանդամները, ինչպես նաև կենսաթոշակային օրենսդրությանը համապատասխան զինծառայողների՝ վերը նշված խմբերին հավասարեցված մյուս հաշմանդամները, երկրորդ աշխարհամարտում Հայաստանի Հանրապետությունը, նախկին ԽՍՀՄ-ը պաշտպանելիս կամ զինվորական այլ պարտականություններ կատարելիս զոհված կամ անհայտ կորած անձանց ընտանիքի անդամները՝ վերոհիշյալ հիմքերով արտոնություններ վերապահելու համար անհրաժեշտ փաստաթղթերի պատճենների իսկությունը վավերացնելու համար.

ը) ***(«ը» կետն ուժը կորցրել է 08.04.08 ՀՕ-27-Ն)***

թ) սեփականատերերն ու օգտագործողները՝ կադաստրային քարտեզագրումն ավարտված տարածքներում անշարժ գույքի նկատմամբ իրավունքների առաջին պետական գրանցման գործընթացի ժամանակ պետական սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերի օտարման պայմանագրերը վավերացնելու համար.

ժ) ֆիզիկական անձինք՝ պետական սեփականություն համարվող բնակարանների անհատույց մասնավորեցման (նվիրատվության) պայմանագրի վավերացման համար.

ժա) սեփականատերը՝ օրենքով նախատեսված դեպքերում սեփականության իրավունքով անհատույց տրամադրված պետական սեփականություն համարվող հողամասերի օտարման պայմանագրերը վավերացնելու համար.

ժբ) 1988-1992 թվականներին Ադրբեջանի Հանրապետությունից բռնագաղթված և Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստացած

անձինք՝ իրենց զբաղեցրած համայնքային բնակարանային ֆոնդի բնակելի տարածքների վարձակալության պայմանագրերը վավերացնելու համար.

ժզ) սեփականատերերը և օգտագործողները՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 225 հոդվածով սահմանված բնակելի տարածության օգտագործման պայմանագրերը վավերացնելու համար.

ժդ) Հայաստանի Հանրապետության պետական ծրագրերի շրջանակներում հողերի միավորման (կոնսոլիդացիա) պայմանագրերը վավերացնելու համար:

***(24-րդ հոդվածը լրաց. 28.12.98 ՀՕ-277, 12.10.99 ՀՕ-4, 30.05.00 ՀՕ-67, 15.12.00 ՀՕ-136, 09.10.01 ՀՕ-234, խմբ. 12.06.02 ՀՕ-375-Ն, լրաց. 04.10.05 ՀՕ-198-Ն)***

**Հոդված 25. Քաղաքացիական կացության ակտերի գրանցում իրականացնող մարմիններում պետական տուրքի գծով արտոնությունները**

Քաղաքացիական կացության ակտերի գրանցում իրականացնող մարմիններում պետական տուրքի վճարումից ազատվում են՝

ա) կրթության համակարգի մարմինները, անչափահասների գործերով հանձնաժողովները՝ ծնողազուրկ և առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին բոլոր տեսակի գիշերօթիկ հիմնարկներ և ուսումնական հաստատություններ ուղարկելու կապակցությամբ ծննդյան վկայականների կրկնօրինակներ տալու համար.

բ) քաղաքացիները՝ քաղաքացիական կացության ակտերի գրանցման ժամանակ, գրանցող մարմնի աշխատակցի թույլ տված սխալների հետ կապված, գրանցումներում փոփոխություններ, լրացումներ և ուղղումներ կատարելու դեպքերում՝ նոր վկայականներ տալու համար.

գ) ամուսինները՝ ամուսնության գրանցման ժամանակ իրենցից մեկի ազգանունը որպես ամուսնական ընդհանուր ազգանուն ընտրելու դեպքում.

դ) անչափահաս երեխաների ակտային գրանցումներում ծնողի ազգանունը կամ անունը փոփոխելու կապակցությամբ կատարվող ուղղումների համար:

**Հոդված 26. Ֆիզիկական անձանց տրվող իրավաբանական նշանակություն ունեցող փաստաթղթերի և մատուցվող ծառայությունների, ինչպես նաև հյուպատոսական ծառայությունների կամ գործողությունների համար պետական տուրքի գծով արտոնությունները**

1. Հայաստանի Հանրապետությունում օտարերկրյա քաղաքացիների կացության կարգավիճակի հետ կապված փաստաթղթեր տալու, Հայաստանի Հանրապետություն մուտքի արտոնագիր ձևակերպելու հետ կապված ծառայությունների համար պետական տուրքի վճարումից ազատվում են.

ա) Հայաստանի Հանրապետության Նախագահի, Ազգային ժողովի և կառավարության կողմից աշխատանքի հրավիրված օտարերկրյա մասնագետներն ու նրանց ընտանիքի անդամները.

բ) Հայաստանի Հանրապետությանը մարդասիրական և տեխնիկական օգնություն ցույց տալու նպատակով Հայաստանի Հանրապետություն ժամանող անձինք: Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ (այդ թվում` Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով) ուղղակիորեն նշված չլինելու դեպքում ծրագրի (գործունեության) տարբերակումն ըստ մարդասիրական օգնության և բարեգործական ու տեխնիկական (այլ) բնույթի իրականացնում է Հայաստանի Հանրապետության կառավարության մարդասիրական օգնությունը կոորդինացնող լիազորված մարմինը.

գ) Հայաստանի Հանրապետության քաղաքացու մերձավոր ազգականները (ամուսին, երեխա, հայր, մայր, քույր, եղբայր).

գ[1]) Հայաստանի Հանրապետությունում հանրակրթական և մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում սովորող, աշխատող (մանկավարժ, դասախոս) օտարերկրյա անձինք.

դ) ***(«դ» ենթակետն ուժը կորցրել է 25.12.06 ՀՕ-49-Ն)***

ե) ***(«ե» ենթակետն ուժը կորցրել է 25.12.06 ՀՕ-49-Ն)***

զ) մինչև 18 տարեկան անձինք.

է) դիվանագիտական անձնագրերով Հայաստանի Հանրապետություն մուտք գործող անձինք, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում օտարերկրյա պետությունների դիվանագիտական ներկայացուցչությունների և հյուպատոսական հիմնարկների աշխատակիցներն ու նրանց ընտանիքի անդամները.

ը) Հայաստանի Հանրապետության Նախագահի, Ազգային ժողովի նախագահի, սահմանադրական դատարանի նախագահի[ուղղ], վարչապետի կամ արտաքին գործերի նախարարի, մարդու իրավունքների պաշտպանի հրավերով Հայաստանի Հանրապետություն այցելող պաշտոնական անձինք և պատվիրակությունների անդամները.

թ) փախստականի կարգավիճակ ստացած անձի` Հայաստանի Հանրապետություն ժամանող մերձավոր ազգականները (ամուսին, երեխա, հայր, մայր, քույր, եղբայր):

2. Հայաստանի Հանրապետություն մուտքի արտոնագիր տալու համար պետական տուրքի վճարումից ազատվում են.

ա) Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունում հավատարմագրված միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչները.

բ) ***(«բ» ենթակետն ուժը կորցրել է 25.12.06 ՀՕ-49-Ն)***

գ) ***(«գ» ենթակետն ուժը կորցրել է 25.12.06 ՀՕ-49-Ն)***

դ) քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով որպես կողմ, վկա կամ փորձագետ Հայաստանի Հանրապետության և այլ պետությունների դատարաններ կամ նախաքննական մարմիններ հրավիրվող անձինք:

3. Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագիր տալու համար պետական տուրքի վճարումից ազատվում են 16 տարին լրանալուց հետո առաջին անգամ անձնագիր ստացող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները և աղքատության ընտանեկան նպաստ ստացող ընտանիքի անդամ՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիները:

4. Հայաստանի Հանրապետության ոստիկանության մարմինների կողմից ֆիզիկական անձանց հաշվառման հասցեների վերաբերյալ տեղեկանք տալու համար պետական տուրքի վճարումից ազատվում են՝

ա) միայնակ կենսաթոշակառուները.

բ) առաջին և երկրորդ խմբի հաշմանդամները.

գ) ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառվող անձինք:

***(Վերնագիրը լրաց. 28.12.98 ՀՕ-277)***

***(26-րդ հոդվածը լրաց. 19.11.02 ՀՕ-462-Ն, 01.12.03 ՀՕ-46-Ն, 03.03.04 ՀՕ-50-Ն, 01.06.06 ՀՕ-116-Ն, փոփ. 25.12.06 ՀՕ-49-Ն, լրաց. 28.11.07 ՀՕ-254-Ն)***

**Հոդված 27. Մշակութային արժեքները արտահանելու կամ ժամանակավոր արտահանելու իրավունքի վկայագիր տալու համար պետական տուրքի գծով արտոնությունները**

Մշակութային արժեքները արտահանելու կամ ժամանակավոր արտահանելու իրավունքի վկայագիր տալու համար պետական տուրքի վճարումից ազատվում են՝

ա) արտահանվող մշակութային արժեքների հեղինակը, իսկ հեղինակի մահից հետո նրա մահվան հաջորդ տարվա հունվարի 1-ից սկսած՝ 50 տարվա ընթացքում, նրա ժառանգները.

բ) Հայաստանի Հանրապետության, այլ պետությունների պետական պարգևներով, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների պարգևներով պարգևատրված անձինք՝ այդ պարգևների գծով՝ համապատասխան հիմնավորող փաստաթուղթ ներկայացնելու դեպքում.

գ) առաջին կամ երկրորդ խմբի հաշմանդամ հեղինակի խնամակալը կամ հոգաբարձուն.

դ) պետության և (կամ) համայնքների սեփականությունը հանդիսացող թանգարանները, արխիվները, գրադարանները, մշակութային արժեքների այլ պահոցներն իրենց հավաքածուներում (ֆոնդերում) մշտապես պահպանվող մշակութային արժեքները ժամանակավոր արտահանելիս օրենքով սահմանված համապատասխան փաստաթղթերի առկայության դեպքում.

ե) երաժշտական համույթները, երաժիշտ կատարողները հյուրախաղերի կամ ուսումնառության մեկնելիս հայրենական կամ արտասահմանյան վարպետների ձեռքով պատրաստված ժամանակավոր արտահանվող երաժշտական գործիքների և նվագարանների համար՝ օրենքով սահմանված համապատասխան փաստաթղթերի առկայության դեպքում.

զ) ***(«զ» ենթակետն ուժը կորցրել է 13.12.00 ՀՕ-123)***

Այն անձինք, ովքեր պետությանը նվիրաբերել են մշակութային արժեքներ, որոնք Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցված են կամ ենթակա են գրանցման պետական պահպանական ցուցակներում կամ գրանցամատյաններում, նվիրաբերված յուրաքանչյուր արժեքի դիմաց ազատվում են (մեկ անգամ) արտահանման իրավունքի վկայագիր տալու համար պետական տուրքի վճարումից:

***(27-րդ հոդվածը լրաց. 28.12.98 ՀՕ-277, խմբ., լրաց., փոփ. 13.12.00 ՀՕ-123, խմբ. 06.12.04 ՀՕ-177-Ն)***

**Հոդված 28. Գյուտերի, օգտակար մոդելների, արդյունաբերական նմուշների, ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների, ֆիրմային անվանումների, ինտեգրալ միկրոսխեմաների տոպոլոգիաների իրավական պահպանության հետ կապված իրավաբանական նշանակություն ունեցող գործողությունների համար պետական տուրքի գծով արտոնությունները**

Պետության կողմից գաղտնի ճանաչված գյուտի, օգտակար մոդելի, արդյունաբերական նմուշի արտոնագիրը գործողության մեջ պահելու համար տարեկան պետական տուրք չի վճարվում:

Արտոնագրատիրոջ կողմից՝ գյուտի կամ օգտակար մոդելի, արդյունաբերական նմուշի իրավատիրոջ կողմից՝ արդյունաբերական նմուշի օգտագործման իրավունքը ցանկացած այլ անձի տալու պատրաստակամության մասին հայտարարության հրապարակումից հետո տրված յուրաքանչյուր լիցենզիայի համար դրան հաջորդող տարվանից արտոնագիրն ուժի մեջ պահելու պետական տուրքը նվազեցվում է 10 տոկոսով, բայց 50 տոկոսից ոչ ավելի:

Ֆիզիկական անձինք, մինչև 25 աշխատող ունեցող իրավաբանական անձինք գյուտի, օգտակար մոդելի արտոնագիր ստանալու և այն գործողության մեջ պահելու հետ կապված, արդյունաբերական նմուշի գրանցման և դրանց նկատմամբ իրավունքները գործողության մեջ պահելու հետ կապված` սույն օրենքի 18 հոդվածի առաջին մասի 1-ին կետի «ա»-«ե», «ժա»-«ժդ», «ժէ»-«իա» ենթակետերով, 2-րդ կետի «ա»-«ե», «է»-«ժ», «ժբ» և «ժգ»-«ժէ» ենթակետերով, 3-րդ կետի «ա»-«դ», «զ»-«ը», «ժ», «ժա»-«ժե» ենթակետերով նախատեսված

պետական տուրքերը, ինչպես նաև ապրանքային և սպասարկման նշանների (բացառությամբ կոլեկտիվ նշանի) գրանցման և վկայական ստանալու հետ կապված՝ սույն օրենքի 18 հոդվածի 4-րդ կետի «ա»-«ը», «ժ», «ժա», «ժգ» (զիջման պայմանագրում փոփոխություն կատարելու մասով), «ժդ», «ժէ»-«ժթ» ենթակետերով սահմանված տուրքերը վճարում են 75 տոկոս զեղչով, իսկ 25-ից 100 աշխատող ունեցող իրավաբանական անձինք՝ 50 տոկոս զեղչով։

Արտոնագրված գյուտի, օգտակար մոդելի, գրանցված արդյունաբերական նմուշի օգտագործման մասին լիցենզային պայմանագիր գրանցելու պահից տվյալ արտոնագիրը գործողության մեջ պահելու համար հետագա տարեկան պետական տուրքը վճարվում է լրիվ դրույքաչափով:

***(Վերնագիրը փոփ. 26.10.99 ՀՕ-14, 13.12.00 ՀՕ-123)***

***(28-րդ հաղվածը լրաց., փոփ. 26.10.99 ՀՕ-14, փոփ., խմբ. 13.12.00 ՀՕ-123, փոփ. 29.05.02 ՀՕ-358-Ն, 24.11.04 ՀՕ-140-Ն, փոփ., խմբ. 10.06.08 ՀՕ-113-Ն)***

**Հոդված 28[1].** **«Զենքի մասին» Հայաստանի Հանրապետության ՕՐԵՆՔՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐ, ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ և ՍԵՐՏԻՖԻԿԱՏՆԵՐ ՏԱԼՈՒ և ԴՐԱՆՑ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Ուսումնական հաստատություններն ազատվում են զենք ձեռք բերելու լիցենզիաների և զենք պահելու և օգտագործելու թույլտվությունների համար նախատեսված պետական տուրքի վճարումներից:

Զենքով պարգևատրված անձինք, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորները, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի անդամները, Հայաստանի Հանրապետության կառավարության անդամները, դատավորները, դատախազները, քննիչները, գլխավոր դատախազի որոշմամբ՝ դատախազության մյուս աշխատողները, ինչպես նաև պետական ռազմականացված կազմակերպությունների զինծառայողները և կենսաթոշակի անցած աշխատակիցներն ազատվում են իրենց ժամանակավորապես հատկացված զենքը պահելու և կրելու թույլտվության համար նախատեսված պետական տուրքի վճարումներից:

***(28[1] հոդվածը լրաց. 02.05.01 ՀՕ-181)***

**Հոդված 29.** **Այլ ծառայությունների կամ գործողությունների համար պետական տուրքի գծով արտոնությունները**

Հայաստանի Հանրապետությունից օդային տրանսպորտի միջոցով ֆիզիկական անձանց (օդային ուղևորների) ելքի համար պետական տուրքի վճարումից ազատվում են՝

ա) մինչև 12 տարեկան երեխաները.

բ) տարանցիկ ուղևորները.

գ) Հայրենական մեծ պատերազմի մասնակիցները և նրանց հավասարեցված անձինք, Հայրենական մեծ պատերազմի հաշմանդամները և նրանց հավասարեցված անձինք, Հայրենական մեծ պատերազմի 1-ին խմբի հաշմանդամին ուղեկցող անձը, Հայրենական մեծ պատերազմում զոհվածների այրիները, Խորհրդային Միության հերոսները և Փառքի երեք աստիճանների շքանշաններով պարգևատրված անձինք, Հայաստանի Հանրապետության ազգային հերոսները.

դ) Հայաստանի Հանրապետության օդանավակայաններից մինչև 450 կիլոմետր շառավղով օդային փոխադրումների իրականացման դեպքում` օդային տրանսպորտի միջոցով մեկնող ֆիզիկական անձինք:

Հայաստանի Հանրապետության պետական ռեգիստրում պահվող տեղեկությունների տրամադրման համար պետական տուրքի վճարումից ազատվում են օրենսդիր և գործադիր իշխանության, տեղական ինքնակառավարման մարմինները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կենսաթոշակային և զբաղվածության հիմնադրամը, մարդու իրավունքների պաշտպանը` Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

Տրանսպորտային միջոցների տարեկան տեխնիկական զննության համար պետական տուրքի վճարումից ազատվում են սոցիալական ապահովության մարմիններից արտոնյալ պայմաններով ավտոմեքենաներ ստացած հաշմանդամները` այդ ավտոմեքենաների մասով:

Պետական իրավասու մարմինները կալանք և (կամ) արգելանք դնելու միջոցով անշարժ գույքի նկատմամբ իրավունքի սահմանափակման պետական գրանցման համար ազատվում են պետական տուրքի վճարումից:

Կադաստրային քարտեզագրումն ավարտված տարածքներում անշարժ գույքի նկատմամբ իրավունքների առաջին պետական գրանցման գործընթացի ժամանակ պետական սեփականություն հանդիսացող հողերի օտարման պայմանագրերի պետական գրանցման համար սեփականատերերը (օգտագործողները) ազատվում են պետական տուրքի վճարումից:

Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման համար պետական տուրքի վճարումից ազատվում են պետական սեփականություն համարվող բնակարաններն անհատույց մասնավորեցրած քաղաքացիները` այդ բնակարանների նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման համար:

Օրենքով նախատեսված դեպքերում սեփականության իրավունքով անհատույց տրամադրված պետական սեփականություն համարվող հողամասերի նկատմամբ սեփականության իրավունքը գրանցելիս սեփականատերերն ազատվում են պետական տուրքի վճարումից:

1988-1992 թվականներին Ադրբեջանի Հանրապետությունից բռնագաղթված և Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստացած` պետական բյուջետային հիմնարկների տնօրինության տակ գտնվող հանրակացարանային բնակելի տարածքները սեփականաշնորհված, ինչպես նաև իրենց զբաղեցրած համայնքային բնակարանային ֆոնդի բնակելի տարածքների նկատմամբ սահմանված կարգով վարձակալ ճանաչված անձինք ազատվում են այդ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման համար պետական տուրքի վճարումից:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 225 հոդվածով սահմանված դեպքերում բնակելի տարածության օգտագործման իրավունքը գրանցելու համար սեփականատերերը և օգտագործողներն ազատվում են պետական տուրքի վճարումից:

Հայաստանի Հանրապետության պետական ծրագրերի շրջանակներում հողերի միավորման (կոնսոլիդացիա) պայմանագրերով սեփականության իրավունքը գրանցելու համար սեփականատերերն ազատվում են պետական տուրքի վճարումից:

***(29-րդ հոդվածը լրաց. 28.12.98 ՀՕ-277, լրաց., փոփ. 12.10.99 ՀՕ-4, լրաց. 30.05.00 ՀՕ-67, 15.12.00 ՀՕ-136, 09.10.01 ՀՕ-234, փոփ. 12.06.02 ՀՕ-375-Ն, լրաց. 04.10.05 ՀՕ-198-Ն, 01.06.06 ՀՕ-116-Ն, խմբ. 26.12.08 ՀՕ-241-Ն)***

**Հոդված 30. Նոտարական կարգով վավերացվող գործարքների համար մի կողմին պետական տուրքից ազատելու դեպքում պետական տուրքի վճարումը**

***(30-րդ հոդվածն ուժը կորցրել է 12.10.99 ՀՕ-4)***

**Հոդված 31. Առանձին վճարողների կամ վճարողների խմբերի համար պետական տուրքի գծով արտոնությունների սահմանումը**

Առանձին վճարողների կամ վճարողների խմբերի համար պետական տուրքի գծով արտոնություններ կարող են սահմանել`

ա) Հայաստանի Հանրապետության Նախագահը` սույն օրենքի 14 հոդվածի 8-րդ կետի «գ» ենթակետով նախատեսված դեպքում.

բ) Հայաստանի Հանրապետության կառավարությունը և տեղական ինքնակառավարման մարմինները` պետական տուրքերի բոլոր տեսակների գծով` վճարողի փոխարեն պետական տուրքը վճարելու միջոցով.

գ) դատարանները կամ դատավորները` սույն օրենքի 9 հոդվածում նշված առանձին գործերով` ելնելով կողմերի գույքային դրությունից.

դ) Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարը, դեսպանը կամ հյուպատոսական հիմնարկի ղեկավարը` սույն օրենքի 15

հոդվածում նշված առանձին գործերով՝ ելնելով վճարողի գույքային դրությունից.

ե) պետական տուրքի վճարման գծով այլ արտոնությունները սահմանվում են օրենքով:

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկն ազատվում է սույն օրենքով սահմանված բոլոր տեսակի պետական տուրքերի վճարումից:

Համահայկական բանկն ազատվում է գրանցման և լիցենզավորման համար սույն օրենքով սահմանված պետական տուրքի վճարումից:

***(31-րդ հոդվածը լրաց., փոփ. 06.07.98 ՀՕ-237, լրաց. 28.12.98 ՀՕ-277, լրաց. 13.12.00 ՀՕ-123, 08.04.08 ՀՕ-27-Ն, 26.12.08 ՀՕ-33-Ն)***

**Գ Լ ՈՒ Խ VI**

***ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԸ ՀԱՇՎԱՐԿԵԼՈՒ, ՎՃԱՐԵԼՈՒ, ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԱՆՑ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԴՐԱՆՔ ՊԱՀՊԱՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ***

**Հոդված 32. Պետական տուրքի գանձումը**

Պետական տուրքը գանձվում է մինչև համապատասխան ծառայության մատուցումը կամ գործողության իրականացումը, եթե սույն օրենքով այլ կարգ սահմանված չէ կամ վճարողին պետական տուրքի գծով արտոնություն տրված չէ:

Պետական տուրքի հաշվարկման և գանձման նպատակով գործողությունների կատարման և ծառայությունների մատուցման պահ է ճանաչվում դրանց ավարտման պահը:

Հայաստանի Հանրապետությունից օդային տրանսպորտային միջոցներով մեկնող ֆիզիկական անձանց ելքի դեպքում ծառայության մատուցման պահ է համարվում թռիչքի պահը:

Պետական տուրքի գանձման օբյեկտ հանդիսացող մի քանի գործողություններ միաժամանակ կատարելու կամ ծառայություններ մատուցելու դեպքում պետական տուրքը հաշվարկվում է յուրաքանչյուրի համար առանձին և փոխանցվում համապատասխան բանկային հաշվին: Պետական տուրքի վճարումը հաստատող փաստաթղթի բնօրինակը, Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից այլ բան սահմանված չլինելու դեպքում, պետական տուրքի տեսակի, վճարողի անվան, գումարի փոխանցման բանկային հաշվի համարի և վճարման ամսաթվի նշումով, մնում է պետական տուրք գանձող մարմնում՝ համապատասխան գործողությունների կատարումը կամ ծառայությունների մատուցումը հաստատող գործերին կցված: Օտարերկրյա պետություններում գործող Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ծառայության մարմինների

իրականացրած գործողությունների և մատուցված ծառայությունների համար գանձված պետական տուրքի գումարները համապատասխան գործողություններ կատարող կամ ծառայություններ մատուցող մարմինները բանկ են մուծում (բյուջե փոխանցում) համապատասխան գործողությունների կատարման, ծառայությունների մատուցման հաջորդող ամսվա առաջին երկու բանկային օրվա ընթացքում:

Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմինը սահմանում և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հետ համաձայնեցնում է պետական տուրքի այն տեսակները, որոնք գանձող մարմնի կամ պաշտոնատար անձի կողմից կարող է իրականացվել կանխիկ: Այդ դեպքում գանձված (ստացված) պետական տուրքի գումարները համապատասխան գործողություններ կատարող կամ ծառայություններ մատուցող մարմինները (դրանց պատասխանատու պաշտոնատար անձինք) բանկ են մուծում (բյուջե փոխանցում) համապատասխան գործողությունների կատարման, ծառայությունների մատուցման հաջորդ երկու բանկային օրվա ընթացքում, բացառությամբ, երբ Հայաստանի Հանրապետությունից օդային տրանսպորտի միջոցներով մեկնող ֆիզիկական անձանց ելքի դեպքում պետական տուրքի գանձման լիազորությունը Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ պատվիրակվել է կազմակերպություններին, որի դեպքում պետական տուրքի գումարները պետական բյուջե են փոխանցվում կառավարության սահմանած կարգով: Այս դեպքում Հայաստանի Հանրապետության ավիափոխադրողները և Հայաստանի Հանրապետությունում հաշվառված օտարերկրյա ավիափոխադրողների ներկայացուցչությունները ուղևորների փոխադրման տոմսի մեջ ներառված պետական տուրքի գումարները պետական բյուջե են փոխանցում ոչ ուշ, քան փաստացի թռիչքի օրվան հաջորդող 3 բանկային օրվա ընթացքում, իսկ ոչ կանոնավոր օդային փոխադրումների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում ներկայացուցչություններ չունեցող օտարերկրյա կազմակերպությունների կողմից օդային փոխադրումներ իրականացնելու դեպքում փաստացի թռիչքի օրվան հաջորդող 10 բանկային օրվա ընթացքում պետական տուրքի գումարները հաշվարկում և պետական բյուջե են փոխանցում օդանավակայանները շահագործող կազմակերպությունները՝ անկախ օդային փոխադրումներ իրականացնող կազմակերպություններից փոխանցումների ստացումից:

Առանձին դեպքերում Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ պետական տուրքի գանձման լիազորությունը օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է պատվիրակվել ձեռնարկություններին, կազմակերպություններին: Այդ դեպքում դրանց իրականացման հետ կապված ծախսերի փոխհատուցման նպատակով տվյալ ձեռնարկությունների, կազմակերպությունների կողմից կարող են սահմանվել վճարներ, (բացառությամբ օդային փոխադրումների տոմսերի վաճառք և օդային

փոխադրումներ իրականացնող կազմակերպություններին պետական տուրքի գանձման լիազորությունը պատվիրակված լինելու դեպքերի)որոնց չափը համաձայնեցվում է Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմնի հետ:

***(32-րդ հոդվածը լրաց. 28.12.98 ՀՕ-277, փոփ. 13.12.00 ՀՕ-123, լրաց. 25.12.06 ՀՕ-49-Ն, 26.12.08 ՀՕ-241-Ն)***

**Հոդված 33. Գյուտերի, օգտակար մոդելների, արդյունաբերական նմուշների, ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների, ֆիրմային անվանումների, ինտեգրալ միկրոսխեմաների տոպոլոգիաների իրավական պահպանության հետ կապված իրավաբանական նշանակություն ունեցող գործողությունների համար պետական տուրքը գանձելու առանձնահատկությունները**

Արդյունաբերական սեփականության օբյեկտի, ինտեգրալ միկրոսխեմայի տոպոլոգիայի հայտը մի քանի ինքնուրույն հայտերի բաժանելու դեպքում յուրաքանչյուր զատված հայտի համար պետական տուրքերը վճարվում են այնպես, ինչպես առանձին ինքնուրույն հայտի համար:

Եթե սույն օրենքի 18 հոդվածով նախատեսված որևէ գործողության համար վճարված տուրքի գումարը չի համապատասխանում սահմանված չափերին, ապա պակաս վճարված պետական տուրքը ենթակա է վճարման` այդ մասին ծանուցագրի ստացման օրվանից երկամսյա ժամկետում:

Գյուտի, օգտակար մոդելի, արտոնագիր տալու համար, արդյունաբերական նմուշի, ապրանքային և սպասարկման նշանների գրանցման և վկայական տալու համար, ապրանքի ծագման տեղանվան գրանցման և (կամ) օգտագործման իրավունքի վկայական տալու համար պետական տուրքերը վճարվում են այդ մասին լիազորված պետական կառավարման մարմնի որոշումը ստանալու օրվանից եռամսյա ժամկետում: Նշված տուրքերը կարող են վճարվել նաև այդ ժամկետի ավարտից հետո` վեց ամսվա ընթացքում: Այս դեպքում դրանց չափերն ավելացվում են 50 տոկոսով:

Արդյունաբերական սեփականության օբյեկտների իրավական պահպանության հետ կապված տարեկան պետական տուրքերը վճարվում են արտոնագրի գործողության լրիվ տարվա համար: Տարեկան պետական տուրքի առաջին վճարումը կատարվում է մինչև արտոնագրի գործողության երկրորդ տարվա սկիզբը կամ արտոնագիր տալու համար սահմանված պետական տուրքի հետ մեկտեղ: Արդյունաբերական նմուշի նկատմամբ իրավունքների պահպանության ժամկետի երկարաձգման պետական տուրքերը վճարվում են յուրաքանչյուր հինգ տարվա համար, որոնց հաշվարկն իրականացվում է հայտի ներկայացման թվականից սկսած, ընդ որում, առաջին հինգ տարվա

համար պետական տուրքը վճարվում է արդյունաբերական նմուշի վկայագիր տալու համար պետական տուրքի հետ միասին: Յուրաքանչյուր հաջորդ հինգ տարվա համար պետական տուրքը վճարվում է դրան նախորդող տարվա ընթացքում:

Սույն օրենքի 18 հոդվածի 1-ին և 2-րդ կետերի «ե» ենթակետերով սահմանված պետական տուրքերը ենթակա են վճարման արտոնագիր տալու համար սահմանված պետական տուրքի հետ մեկտեղ:

Եթե արտոնագիր կամ վկայագիր տալու համար պետական տուրքը վճարվել է սահմանված ժամկետի ավարտից հետո՝ վեց ամսվա ընթացքում՝ սույն հոդվածի երրորդ մասի համաձայն՝ 50 տոկոսով ավելացված դրույքաչափով, ապա դրա հետ մեկտեղ վճարման ենթակա այլ պետական տուրքերի դրույքաչափերը չեն փոխվում:

Արտոնագրի գործողության յուրաքանչյուր հաջորդ տարվա համար պետական տուրքերը վճարվում են արտոնագրի գործողության ընթացիկ տարվա ընթացքում: Արդյունաբերական նմուշների նկատմամբ իրավունքների գործողության յուրաքանչյուր հաջորդ հինգ տարվա համար պետական տուրքը վճարվում է իրավունքների ընթացիկ գործողության հինգերորդ տարվա ընթացքում: Նշված պետական տուրքերը կարող են վճարվել նաև սահմանված ժամկետի ավարտից հետո՝ վեց ամսվա ընթացքում: Այս դեպքում դրանց չափն ավելացվում է 50 տոկոսով:

Նշանի գրանցման գործողության, ինչպես նաև ապրանքի ծագման տեղանվան օգտագործման իրավունքի վկայականի գործողության ժամկետը երկարաձգելու համար պետական տուրքը վճարվում է դրանց գործողության տասներորդ տարվա ընթացքում: Պետական տուրքը կարող է վճարվել նաև այդ ժամկետի ավարտից հետո՝ վեց ամսվա ընթացքում: Այս դեպքում տուրքի չափն ավելացվում է 50 տոկոսով:

***(9-րդ մասն ուժը կորցրել է 10.06.08 ՀՕ-113-Ն)***

Սույն հոդվածի երկրորդ, երրորդ, չորրորդ, վեցերորդ և յոթերորդ մասերով սահմանված ժամկետներում վճարված պետական տուրքի վճարումը հաստատող փաստաթուղթը պետական տուրք գանձող մարմին է ներկայացվում ոչ ուշ, քան տվյալ ժամկետի ավարտից հետո՝ 10 օրվա ընթացքում: Նշված ժամկետում վճարումը հաստատող փաստաթուղթը չներկայացնելու դեպքում տվյալ պետական տուրքը համարվում է չվճարված, և համապատասխան գործողությունը չի կատարվում, կամ ծառայությունը չի մատուցվում:

***(6-րդ մասը հանվել է 13.12.00 ՀՕ-123)***

***(Վերնագիրը փոփ. 26.10.99 ՀՕ-14, 13.12.00 ՀՕ-123)***

***(33-րդ հոդվածը լրաց., փոփ. 28.12.98 ՀՕ-277, փոփ. 26.10.99 ՀՕ-14, փոփ., խմբ. 13.12.00 ՀՕ-123, փոփ., լրաց., խմբ. 10.06.08 ՀՕ-113-Ն)***

**Հոդված 34.** **Պատասխանատվությունը պետական տուրքը ճիշտ**

**հաշվարկելու և ժամանակին գանձելու համար**

Պետական տուրքը հաշվարկում և գանձում են սույն օրենքով սահմանված ծառայություններ կամ գործողություններ իրականացնող պաշտոնատար անձինք:

Պետական տուրքը ճիշտ հաշվարկելու, ժամանակին գանձելու պատասխանատվությունը դրվում է համապատասխան ծառայություններ կամ գործողություններ իրականացնող պաշտոնատար անձանց վրա, իսկ գումարները կանխիկ գանձված (ստացված) լինելու դեպքում՝ դրանք ժամանակին բյուջե փոխանցելու պատասխանատվությունը դրվում է պետական տուրք գանձող մարմնի պատասխանատու պաշտոնատար անձի վրա:

Սույն օրենքով սահմանված տարեկան հերթական պետական տուրքի վճարումը յուրաքանչյուր առաջիկա տարվա համար կատարվում է մինչև առաջիկա տարին սկսելը՝ լիազոր մարմնի կողմից տարեկան պետական տուրքի գանձման օբյեկտ հանդիսացող ծառայությունների մատուցման կամ գործողությունների կատարման արդյունքում փաստաթղթերի (իրավունքների, թույլտվությունների, արտոնագրերի, լիցենզիաների) վրա նշված փաստաթղթերի (իրավունքների, թույլտվությունների, արտոնագրերի, լիցենզիաների) տրման ամսաթվից ոչ ուշ:

Գործունեության արտոնագրի, թույլտվության կամ լիցենզիայի գործողությունը կասեցնելու, դադարեցնելու (բացառությամբ տարեկան պետական տուրքը չվճարելու դեպքերի) մասին լիազոր մարմինների որոշումները վերադասության կամ դատական կարգով անվավեր ճանաչվելու դեպքում սույն մասով սահմանված տարեկան պետական տուրքի վճարման ժամկետը երկարաձգվում է արտոնագրի, թույլտվության կամ լիցենզիայի գործողությունը կասեցնելու, դադարեցնելու որոշման ընդունման օրվանից մինչև այդ որոշումն անվավեր ճանաչվելու մասին ակտն ուժի մեջ մտնելու օրն ընկած ժամանակահատվածով:

Օրենքի 32 հոդվածով սահմանված կարգով պետական տուրքի գանձման լիազորությունը կազմակերպություններին պատվիրակված լինելու դեպքում, եթե սույն օրենքով սահմանված ժամկետներում դրանց կողմից չվճարված պետական տուրքի գումարը գերազանցում է 5.0 մլն դրամը, պետական տուրքի հաշվարկման և գանձման կարգի պահպանման նկատմամբ վերահսկողություն իրականացնող Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած մարմնի ղեկավարը կազմակերպությունների բանկային հաշիվների նկատմամբ կիրառում է արգելանք՝ ապահովելով պետական տուրքի գծով պարտավորությունների կատարումը: Ընդ որում, նշված արգելանքից Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած մարմնի ղեկավարը հրաժարվել չի կարող, քանի դեռ պետական տուրքի գծով պարտավորություններն ամբողջությամբ կատարված չեն:

*(34-րդ հոդվածը լրաց. 28.12.98 ՀՕ-277, փոփ., լրաց. 14.12.01 ՀՕ-283, խմբ., լրաց. 15.12.05 ՀՕ-11-Ն, լրաց. 26.12.08 ՀՕ-241-Ն)*

**Հոդված 35. Պատասխանատվությունը պետական տուրքի գանձումն ուշացնելու համար**

Պետական տուրք գանձող պաշտոնատար անձանց կողմից իրենց վրա դրված պարտականությունները ոչ պատշաճ կատարելու հետևանքով սահմանված ժամկետներում բյուջե չգանձված պետական տուրքի գումարները ենթակա են նրանցից բռնագանձման պետական բյուջե` ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար 0.5 տոկոսի չափով հաշվարկված տույժի հետ:

Պետական տուրք գանձող պաշտոնատար անձինք սահմանված ժամկետում բյուջե չգանձված պետական տուրքի գումարները, ինչպես նաև դրանց համար սույն հոդվածի առաջին մասին համապատասխան հաշվարկված տույժերը բյուջե են վճարում լիազորված մարմնի կողմից համապատասխան ակտ ներկայացնելուց հետո` 10-օրյա ժամկետում:

Սույն օրենքով սահմանված կարգով պետական տուրքի վճարման ժամկետի հետաձգման գծով արտոնություն ունեցող վճարողի կողմից պետական տուրքի վճարման համար սահմանված ժամկետներում վճարումը, ինչպես նաև սույն օրենքով սահմանված տարեկան պետական տուրքերի վճարման համար սահմանված ժամկետներում վճարումը չկատարելու դեպքում բյուջե չվճարված պետական տուրքի գումարները ենթակա են վճարողից բռնագանձման պետական բյուջե` ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար 0.5 տոկոսի չափով հաշվարկված տույժի հետ միասին:

Պետական տուրքի չգանձված կամ չվճարված գումարների, ինչպես նաև դրանց համար սույն օրենքով սահմանված տույժերի գանձումը կատարվում է դատական կարգով:

Տարեկան պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթղթում վճարման նպատակը (լիցենզիայի համարը և պարտավորության ժամանակահատվածը) չնշելու կամ վճարումից հետո՝ երեսունօրյա ժամկետում, վճարման նպատակի վերաբերյալ գրավոր հայտարարություն լիազոր մարմին չներկայացնելու դեպքում տարեկան պետական տուրք վճարողի կողմից վճարված տարեկան պետական տուրքի գումարների հաշվին առաջին հերթին մարվում են սույն օրենքով սահմանված տարեկան պետական տուրքի տույժերի գծով պարտավորությունները, ապա` հերթական տարեկան պետական տուրքի գումարները (ըստ դրանց վճարման համար սահմանված ժամկետի վաղեմության): Սույն մասում նշված ժամկետում գրավոր հայտարարություն չներկայացնելու կամ ներկայացված հայտարարությունում նշված վճարման նպատակը նոր հայտարարությամբ փոփոխելու դեպքում տարեկան պետական տուրքի պարտավորությունները վերահաշվարկման ենթակա չեն:

Լիցենզիաների, արտոնագրերի և թույլտվությունների համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված գործողության ժամկետներից շուտ դրանց գործողության դադարեցման դեպքում դադարեցման օրվանից, լիցենզավորված անձի դիմումի հիման վրա լիցենզիայի դադարեցման դեպքում դիմումի ներկայացման (դիմումում դադարեցման ավելի ուշ ժամկետ նշված լինելու դեպքում՝ այդ օրվանից, իսկ դիմումում ավելի վաղ ժամկետ, քան դիմումի ներկայացման օրը նշված լինելու դեպքում՝ դիմումի ներկայացման օրվանից) օրվանից, եթե այդ դիմումը հետագայում բավարարվել է, իսկ սույն օրենքի 6[1] հոդվածի առաջին մասի 4-րդ կետով սահմանված դեպքում համապատասխան օրենքն ուժի մեջ մտնելու օրվանից սկսած նախկինում չվճարված հերթական տարեկան պետական տուրքերի վճարման համար սույն օրենքով սահմանված ժամկետներում վճարումը չկատարելու համար ժամկետանց օրերի տույժեր չեն հաշվարկվում:

***(35-րդ հոդվածը լրաց. 28.12.98 ՀՕ-277, փոփ. 13.12.00 ՀՕ-123, լրաց. 15.12.05 ՀՕ-11-Ն)***

**Հոդված 36. Պետական տուրքի վճարումը**

Հայաստանի Հանրապետությունում պետական տուրքը վճարվում է հայկական դրամով:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հետ համաձայնեցնելով կարող է սահմանել և պարտադիր կիրառության մեջ դնել պետական տուրքի վճարման բանկային հաշվարկային փաստաթղթերի (անդորրագրերի) տիպային ձևեր:

Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս իրականացվող ծառայությունների կամ գործողությունների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության պետական սահմանի անցման կետերում Հայաստանի Հանրապետության մուտքի վիզայի տրամադրման համար պետական տուրքերը կարող են վճարվել արտարժույթով:

Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս իրականացվող ծառայությունների կամ գործողությունների համար պետական տուրքերը արտարժույթով գանձելիս հիմք է ընդունվում Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից հրապարակված նախորդ տարվա՝ արժութային շուկաներում ձևավորված միջին տարեկան փոխարժեքը:

***(36-րդ հոդվածը լրաց. 28.12.98 ՀՕ-277, խմբ., լրաց. 25.12.06 ՀՕ-49-Ն, փոփ. 09.04.07 ՀՕ-151-Ն)***

**Հոդված 37. Պետական տուրքի հաշվարկման և գանձման կարգի պահպանման նկատմամբ վերահսկողությունը**

Պետական տուրքի հաշվարկման և գանձման կարգի պահպանման նկատմամբ վերահսկողությունն իրականացնում են Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած մարմինները:

**Հոդված 38. Պետական տուրքը վերադարձնելը**

Պետական տուրքը ենթակա է վերադարձման մասնակի կամ լրիվ`

ա) եթե պետական տուրքը վճարվել է ավելի, քան պահանջվում է գործող օրենսդրությամբ.

բ) դատարանների կողմից դիմումները (բողոքները) վերադարձնելու կամ դրանց ընդունումը մերժելու, ինչպես նաև նոտարի կողմից նոտարական գործողությունների կատարումը մերժելու, քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմինների կողմից քաղաքացիական կացության ակտերի գրանցումը և ուրիշ գործողությունների ու ծառայությունների կատարումը մերժելու դեպքում.

գ) տվյալ գործով վարույթը կարճելու կամ հայցն առանց քննության թողնելու դեպքում, եթե գործը ենթակա չէ դատարանում քննության, կամ հայցվորը չի պահպանել տվյալ կատեգորիայի գործի համար վեճը լուծելու սահմանված նախնական արտադատարանական կարգը, կամ հայցը ներկայացրել է անգործունակ անձը.

դ) եթե հայցի ենթադրական գինը, որից դատարանը գանձել են պետական տուրքը, գործի քննության ընթացքում ճշտվել է, որի հետևանքով պակասել է հայցի ընդհանուր գինը.

ե) գույքն արգելանքից ազատելու մասին հայցը բավարարելու դեպքում.

զ) պետական տուրք գանձող պետական մարմնի կողմից այս կամ այն գործողության կատարումը մերժելու դեպքում, եթե օրենքով այլ բան սահմանված չէ.

է) մինչև համապատասխան գործողությունների կատարման կամ ծառայությունների մատուցման ավարտման պահը, պետական տուրքը վճարողի կողմից համապատասխան ծառայություններ ստանալուց կամ գործողություններ կատարելուց հրաժարվելու դեպքում, բացառությամբ այն դեպքերի, երբ պետական տուրք գանձող մարմնի կողմից, սահմանված կարգով, արդեն սկսվել է տևական բնույթ կրող համապատասխան գործողության կատարումը կամ ծառայության մատուցումը.

ը) անչափահաս երեխաներ չունեցող ամուսինների փոխադարձ համաձայնությամբ ամուսնալուծության ակտի գրանցման փոխարեն ուղղ: մուծված պետական տուրքը, եթե գրանցումը չի կատարվել ամուսինների հաշտվելու կամ նրանցից որևէ մեկի չներկայանալու պատճառով.

թ) քաղաքացիական կացության ակտերը կամ նոտարական կարգով վավերացված պայմանագրերը, ժառանգության իրավունքի մասին

վկայականները և այլ փաստաթղթերը դատական կարգով անվավեր ճանաչվելու դեպքում.

ժ) արդյունաբերական սեփականության օբյեկտների գրանցման հայտերով փորձաքննության կայացրած որոշումը բողոքարկման խորհրդի կամ դատարանի կողմից անվավեր ճանաչելու դեպքում բողոքարկման խորհուրդ բողոք ներկայացնելու համար վճարված պետական տուրքը, բացառությամբ այն դեպքերի, երբ դա կատարվում է փորձաքննության որոշումն ընդունումից հետո ի հայտ եկած նոր հանգամանքների հիմքերով.

ժա) Հայաստանի Հանրապետությունից մեկնելու փաստաթղթեր ստանալու համար քաղաքացիների վճարած պետական տուրքերը՝ մինչև մեկնելու թույլտվություն ստանալը արտասահման մեկնելուց հրաժարվելու դեպքում:

Սույն օրենքի 18 հոդվածով նախատեսված և վերադարձման ենթակա պետական տուրքի գումարները վճարողի կողմից, պետական տուրք գանձող մարմնի սահմանած կարգով, կարող են օգտագործվել նույն մարմնի կողմից այլ գործողություն կատարելու կամ ծառայություն մատուցելու համար, եթե վերադարձման ենթակա պետական տուրքի գումարները վճարված են այն հաշվին, որին վճարվում են տվյալ գործողության կատարման կամ ծառայության մատուցման համար սահմանված պետական տուրքի գումարները:

***(38-րդ հոդվածը փոփ. 28.12.98 ՀՕ-277, խմբ., լրաց. 13.12.00 ՀՕ-123, լրաց. 29.05.02 ՀՕ-358-Ն, խմբ. 12.06.02 ՀՕ-375-Ն, 05.12.06 ՀՕ-255-Ն)***

**Հոդված 39. Պետական տուրքը վերադարձնելու կարգը**

Ֆինանսական մարմինների պետական տուրքը վերադարձնում են այն բյուջեից, որին հաշվանցվել է գումարը՝ ոչ ուշ, քան սույն հոդվածով սահմանված փաստաթղթերը ստանալուց հետո 30 օրվա ընթացքում, բացառությամբ օդային տրանսպորտի միջոցներով ֆիզիկական անձանց ելքի համար վճարված տուրքի գումարների: Օդային տրանսպորտային միջոցներով ֆիզիկական անձանց ելքի համար վճարված պետական տուրքը ֆիզիկական անձանց է վերադարձվում Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

Պետական տուրքը վերադարձվում է վճարողի դիմումի համաձայն, եթե այն ներկայացվել է ֆինանսական մարմին՝ պետական տուրքի կամ նրա մի մասը վերադարձնելու իրավունքի առաջացման օրվանից երեք տարուց ոչ ուշ ժամկետում:

Պետական տուրքը կամ նրա մի մասը վերադարձնելու մասին ֆինանսական մարմին դիմում տալը կասեցնում է վերոհիշյալ ժամկետի ընթացքը:

Պետական տուրքը վերադարձնելու մասին դիմումին կցվում են դատարանի և պետական տուրք գանձող մյուս հիմնարկների տեղեկանքները՝

պետական տուրքը մասնակի կամ լրիվ վերադարձնելու հանգամանքների հիմնավորման մասին, ինչպես նաև պետական տուրքի վճարումը հաստատող փաստաթղթերը:

***(39-րդ հոդվածը փոփ. 28.12.98 ՀՕ-277, լրաց. 26.12.08 ՀՕ-241-Ն)***

**Հոդված 40. Պետական տուրքը վերադարձնելու արժույթը**

Պետական տուրքը վերադարձվում է հայկական դրամով, իսկ սույն օրենքի 36 հոդվածի երկրորդ մասով նախատեսված դեպքերում՝ նաև արտարժույթով:

**Հոդված 41. Պետական տուրքը գանձելիս համապատասխան ծառայություններ կամ գործողություններ իրականացնող պաշտոնատար անձանց գործողությունների գանգատարկումը**

Պետական տուրքը գանձելիս համապատասխան ծառայություններ կամ գործողություններ իրականացնող պաշտոնատար անձանց գործողությունները կարող են գանգատարկվել այն մարմին, որին անմիջականորեն ենթարկվում են այդ անձինք, կամ՝ դատարան:

Վերադասության կարգով գանգատները քննության են առնվում և դրանց վերաբերյալ որոշումներ են ընդունվում ոչ ուշ, քան գանգատը ստացվելու օրվանից հնգօրյա ժամկետում:

**Հոդված 42. Սույն օրենքի կիրառման վերաբերյալ գերատեսչական նորմատիվ ակտերը**

Սույն օրենքի կիրառման վերաբերյալ գերատեսչական նորմատիվ ակտերն ընդունում է Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմինը:

**Գ Լ ՈՒ Խ VII**

***ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ***

**Հոդված 43. Օրենքի ուժի մեջ մտնելը**

Սույն օրենքն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել 1996 թվականի հուլիսի 19-ի «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը՝ հետագա փոփոխություններով և լրացումներով հանդերձ:

**Հոդված 44.** **Մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը վճարման ենթակա, սակայն չվճարված պետական տուրքերի գանձումը**

***(44-րդ հոդվածն ուժը կորցրել է 13.12.00 ՀՕ-123)***

**Հայաստանի Հանրապետության Նախագահի Լ. Տեր-Պետրոսյան**

Երևան
10 հունվարի 1998 թ.
ՀՕ-186